

ՆԱԽԱԳԱՀ ԱՍՏՏ. «ՈՂՋՈՅՆ ՀԱԼԷՊԻ ՅԱՐԹԱՆԱԿԱԾ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ»

Սուրիոյ նախագահ Պաշար ալ Ասատ Սուրիոյ ազատագրումի վերջին մարտերուն առիթով սուրիական պետական պատկերասփիւռի կայանէն հանդէս եկաւ Գալէպի ժողովուրդին ուղղուած ողջոյնի խօսքով:



Նախագահը ըսաւ. «Գալէպի մեր ազնիւ հարազատներ, ողջոյն ձեր դիմադրողականութեան եւ հաստատակամութեան, ողջոյն ձեր հաւատքին եւ հայրենասիրութեան, ողջոյն ձեր զոհողութեան եւ արիւթեան:

2016-ի աւարտին, երբ Գալէպ ազատագրուեցաւ, ըսի, որ Գալէպ յետագատագրման պիտի չըլլայ այն, ինչ էր նախքան ազատագրումը: Ես այդ յայտարարութիւնը կատարեցի մեկնելով մեր բանակին վճռակամութենէն,

Շար.՝ էջ 5 >

ՍԱՊՊԱՂ «ՀԱՅՈՑ ԺԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ՄԱՐԿԱՅԻՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԲԱՐԱՔԱԿԱՆ ՊԱՐՏԱԽՈՐՈՒԹԻՒՆ Է՛»

Հինգշաբթի, 13 Փետրուար 2020-ին, Սուրիոյ խորհրդարանը գումարեց իր 10-րդ նիստը, որուն ընթացքին միաձայնութեամբ քուէարկեց ի շահ Սուրիական-Հայաստանեան խորհրդարանական Բարեկամութեան Յանձնաժողովին ներկայացուցած Հայոց Ցեղասպանութեան ճանաչումի բանաձեւին: Սուրիոյ խորհրդարանի նախագահ Համուտա Սապպաղ խօսք առնելով յայտնեց, որ ներկայիս Թուրքիոյ թշնամական ընթացքը հիմնուած է օսմանեան բարբարոսական վարքագիծին վրայ, շեշտելով որ հայ ժողո-



վուրդին դեմ գործուած ոճիրները ներկայիս կը շարունակուին Սուրիոյ ժողովուրդին դէմ, նոյն ոճրագործ թուրքին կողմէ: Այս աւելցուց, որ 1915-ին Սուրիա գրկաբաց ընդունեց ցեղասպանութենէն ճողոպրած հայերը, որոնք դարձան հաւատարիմ քաղաքացիներ եւ անբաժանելի մասը սուրիական ընկերութեան. այս իսկ պատճառով նման ոճիրներ մոռացութեան չեն եւթարկուիր: Սապպաղ դիտել տուաւ, որ աւելի քան մէկ ու կէս միլիոն հայերու ցեղասպանութիւնը պարզապէս պատմական դէպք մը չէ, այլ խարան մը՝ համայն մարդկութեան ճակտին: Ահա թէ ինչո՛ւ օսմանեան ոճիրներու դատապարտումը մարդկային, բարոյական եւ քաղաքական պարտաւորութիւն է եւ կը նշանակէ բոլոր բռնատերերուն, ներառեալ Էրտողանին սանձումը նման ոճիրներ գործելէ:

Սապպաղ եզրափակելով ըսաւ. «Այսօր Սուրիոյ նախագահ Պաշար ալ Ասատի խոհեմ ղեկավարութեան շնորհիւ, սուրիական բանակը դեմ

Շար.՝ էջ 11 >

ԽՕՍԲ՝ ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԱԽՏԻՔԻ

Սուրիայութիւնը բարձրօրէն կը գնահատէ Սուրիոյ խորհրդարանի Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման որոշումը:

Սուրիան վերջին կայանն էր Օսմանեան Կայսրութեան կողմէ ծրագրուած եւ գործադրուած ցեղասպանութեան եւ տեղահանութեան կարաւաններուն: Սուրիոյ ժողովուրդը հայ ժողովուրդին օգնութեան ձեռք երկարեց, միխթարեց զայն ու իր հացին եւ տունին, նոյնիսկ անապատային շրջաններուն մէջ վրանին բաժնեկիցը դարձուց ցեղասպանութենէն ճողոպրած, զարհուրելի սպանդներ ապրած հայ ժողովուրդին գաւակները: Մեր ժողովուրդին գաւակները ապաստան գտան Սուրիոյ մէջ, անոր ազնիւ ու խիզախ ժողովուրդին մօտ. այն ժողովուրդին, որ ճիգ չխնայեց փրկելու հայ ժողովուրդին մնացորդացը եւ նպաստեց որ ան այս երկրին մէջ կտանք սկըսի, պահպանելով իր ինքնութիւնն ու մշակոյթը եւ սատարելով Սուրիական Հայրենիքի բարգաւաճման, անոր մարդասիրական առաքելութեան պայծառացման:

Սուրիան, իր ղեկավարութեամբ եւ ժողովուրդով, առաջին իսկ օրէն, գանազան առիթներով, դատապարտեց հայ ժողովուրդին դեմ ի գործ դրուած ցեղասպանութիւնը: Այսօր, սակայն, իր այդ կեցուածքը կը թագադրուի Սուրիոյ խորհրդարանի յստակ ու վճռական որոշումով, որ օրինական հիմքերով, խորհրդարանի անդամներու միաձայնութեամբ կը հաստատէ ու կը դատապարտէ մարդկութեան դէմ ուղղուած ցեղասպանական այս մեծ ոճիրը: Դատապարտում մը, որ կը ցոլացնէ Սուրիոյ ժողովուրդին բոլոր բաղադրիչներուն կարծիքը:

Սուրիական Արաբական Հանրապետութեան խորհրդարանի որոշումը, մեկնելով Սուրիոյ ժողովուրդին մարդկային եւ քաղաքակրթական արժեքներէն, աշխարհի բոլոր ժողովուրդներուն կոչ կ' ուղղէ դատապարտելու Հայոց Ցեղասպանութիւնը՝ կանխարգիլելու մարդկային նման աղետներու կրկնութիւնը:

Մենք հպարտ ենք Սուրիական Հայրենիքով: Հպարտ ենք, որ կը սատարենք անոր բարգաւաճման, անոր ինքնիշխանութեան եւ անկախութեան պահպանման, դեմ դնելով բոլոր անոնց, որոնք կը փորձեն աղաւաղել Սուրիոյ առաքելութիւնն ու արժեքը:

Շնորհակալութիւն Սուրիոյ ղեկավարութեան եւ ժողովուրդին: Կեցցեն Սուրիան եւ Սուրիոյ ազնիւ ու վսեմ ժողովուրդը:

*Մասիս Եպս. Զօպուեան
Առաջնորդ Բերիոյ Հայոց Թեմին
Պետրոս Արք. Միրիաթեան
Առաջնորդ Բերիոյ Հայ Կաթողիկէ Համայնքին
Վերապատուելի Յարութիւն Սելիմեան
Համայնքապետ Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքին
Հալէպ, 14 Փետրուար 2020*

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տասնամեակներէ ի վեր Սուրիոյ Հայ Դատի Յանձնախումբը քաղաքական, յարաբերական, քարոզչական, մշակութային հետետողական աշխատանք կը ծաւալէ հանրային կարծիք ձեւաւորելով՝ Սուրիոյ խորհրդարանին կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման բանաձեւը հաստատելու համար:

Այս շրջագիծէն ներս, անցնող տարիներուն արաբերէն բազմաթիւ հրատարակութիւններ լոյս տեսան՝ գործակցաբար Հայ Դատի բարեկամներու հետ, նոյն նպատակով յարաբերական աշխատանք ծաւալեցաւ Հայոց Ցեղասպանութենէն մազապուրծ Սուրիա հասած հայ ժողովուրդին օգնութեան ձեռք երկարած արաբ ցեղապետներուն հետ:

ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅ ՀԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ
13 ՓԵՏՐՈՒՄ 2020
Շար.՝ էջ 14 >



021 2110 958



www.kantsasar.com



kantsasarweekly@hotmail.com



www.facebook.com/kantsasar

Խմբագրական

ՀԱԼԷՊԸ ԿԸ ՎԵՐԱԳՏՆԵ ԻՐ ԱՊԱՔԻՆՄԱՆ ԿՈՌՈՒԱՆՆԵՐԸ

Անցնող շաբաթը Հալեպին համար անկիւնադարձային իրագործումներու շաբաթ մըն էր:

Սուրիական Բանակի Հրամանատարութեան Հալեպի ամբողջական ազատագրումը յայտարարելէն ետք ընթացք առին Հալեպ -Դամասկոս միջազգային ճամբուն վերականգնումի ու վերաբանեցման աշխատանքները:

Այս ճամբան Հալեպը կը միացեր Սուրիոյ այլ նահանգներու եւ յարակից երկիրներու: Առեւտրական եւ ծառայողական ոլորտներուն մէջ մեծ դերակատարութիւն ունէր Հալեպ-Դամասկոս ճամբան, որովհետեւ այդ ճամբուն բնականոն օգտագործումով կ'ապահովուէր Հալեպի առեւտրական, ծառայողական եւ սննդային ոլորտներու այլազան կարիքները:

Հալեպի ազատագրումով վերահաստատուեցաւ քաղաքին խաղաղութիւնը, որուն լոյսին տակ միայն կարելի պիտի ըլլայ վերականգնել Հալեպը եւ գէթ տնտեսութեան անհիւր թաւալել:

Սուրիոյ նախագահին Հալեպի ժողովուրդին ուղղած ուղերձին մէջ յստակօրէն կ'որոշուէր Հալեպը տնտեսապէս ոտքի հանելու ծրագիրը:

«Հալեպ նախքան ազատագրումն ու ազատագրումէն ետք նոյն պատկերը պիտի չունենայ», վերստին կը հաստատէր նախագահը, հաւաստիացնելով, որ պատերազմի տարիներուն ահաւոր զրկանք կրած, զոհեր ու նահատակներ տուած Հալեպի ժողովուրդին համար ազատագրումէն ետք նոր կեանք պիտի սկսի:

Նախագահին խօսքին յաջորդեց Հալեպի միջազգային օդակայանին բացումը: Չորեքշաբթի առաւօտուն օդակայանը ընդունեց Դամասկոսէն ժամանած առաջին ճամբորդատար օդանաւը: Ուրջ տարի փակ մնալէ ետք օդակայանը բանիլ սկսաւ:

Հալեպի օդակայանին բացումը, բնականաբար, դրական անդրադարձ պիտի ունենայ երկրի առեւտրատնտեսական եւ զբօսաշրջութեան ոլորտներուն վրայ:

Հալեպը նախապատերազմեան շրջանին կը համարուէր Սուրիոյ տնտեսութեան մայրաքաղաքը՝ իր արհեստաւորներով, գործարաններով, աշխարհագրական դիրքով ու բնակչութեան գունեղ պատկերին շնորհիւ:

Օդակայանին բացումով Հալեպի ունեցած ներդրումը Սուրիոյ տնտեսութեան աստիճանաբար կրնայ վերականգնիլ եթէ ապահովուին այդ յառաջընթացին նպաստող նախադրեալները՝ ելէկտրականութիւն, վառելանիւթ, ենթակառոցներու աշխուժացում, օրէնքներու հետապնդում եւ տնտեսական ծրագիրներու մշակման նպաստող միջավայրի ու պայմաններու ստեղծում:

Սուրիոյ նախագահին առաջարկով, յառաջիկայ Կիրակի Սուրիոյ կառավարութիւնը, իր լրիւ կազմով, հերթական իր նիստը պիտի գումարէ Հալեպի մէջ, մօտէն ծանօթանալու Հալեպի դժուարութիւններուն, զօրավիգ կանգնելու անոր տնտեսութեան ու վերականգնումին եւ բարելաւելու քաղաքի բոլոր շրջաններուն ծառայողական դաշտը:

Այսօր, ահաբեկչութեան վտանգին վերացումով ու ապահովութեան վերահաստատումով, Հալեպի ազատագրումը առանձնայատուկ իմաստ կը զգենու տնտեսական ու կենցաղային ներկայ ճգնաժամին լոյսին տակ, որ արդիւնք է արեւմտեան ու կարգ մը արաբական երկիրներու պարտադրած շրջափակման ու սահմանած անմարդկային պատիժներուն, այնպէս ինչպէս պատերազմի գործած ակերներուն: Աւերներ, որոնք շրջեցին պետութեան առաջնահերթութիւնները՝ հիմնականը դարձնելով ժողովուրդին կենսական կարիքներուն ապահովումը: Պետութիւնը, սակայն, սուրիական բանակին արձանագրած յառաջիւղացքին լոյսին տակ, այսօր ձեռնարկած է երկրի վերականգնումի աշխատանքին, կը ծրագրէ թափ տալ արտադրողական եւ շինարարական ծրագիրներու իրականացման՝ վստահելով ժողովուրդին սեփական ուժերուն, զօրավիգ կանգնելով անոր աշխատանքին: Մարտահրաւեր մը, որ նոր ուժականութիւն կը ստանայ սուրիական յաւելեալ տարածքներու ազատագրումով եւ իր կարգին առաջնային կը դարձնէ օտար ուժերու երկրէն վանելու մարտահրաւերը նաեւ:

«Գ.»

-Սուրիական Բանակի Հրամանատարութիւնը հանդէս եկաւ հաղորդագրութեամբ, պաշտօնապէս յայտարարելով Հալեպի արեւմտեան եւ հիւսիսարեւմտեան գիւղերու ազատագրումը: Հրամանատարութիւնը յայտնեց, որ սուրիական բանակը բոլոր մարտեր մղեց զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն դէմ եւ Հալեպը ապահով տարածք յայտարարեց:



-Չորեքշաբթի, 19 Փետրուար 2020-ի առաւօտուն, Հալեպի միջազգային օդակայանը, պատերազմական գործողութիւններու եւ ահաբեկչական հրթիռակոծումներու բերումով աւելի քան ուրջ տարի փակ մնալէ ետք, ընդունեց Դամասկոսէն ժամանած առաջին ճամբորդատար օդանաւը: Օդակայանը պատրաստ է արդէն կանոնաւոր ձեւով բանելու, սուրիական բանակին արձանագրած յաղթանակներուն եւ Հալեպ նահանգի ազատագրման ու ապահով տարածք յայտարարման լոյսին տակ:



-Ֆրանսական «France 24 arabic» եւ եգիպտական «Ըսպուհ» թերթերը յայտնեցին, որ 13 Փետրուար 2020-ին, Սուրիոյ խորհրդարանը ճանչցաւ Օսմանեան Կայսրութեան իրագործած Հայոց Ցեղասպանութիւնը եւ դատապարտեց պատմական այդ ճշմարտութիւնը խեղաթիւրող փորձերը: Լիբանանեան «Զալիմա online» կայքէջը վկայակոչեց Հայ Դատի Կեդրոնական Խորհուրդին հրապարակած հաղորդագրութիւնը յայտնելով. «Հայ Դատի Յանձնախումբը բարձր կը գնահատէ Սուրիոյ խորհրդարանին կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը միաձայնութեամբ եւ զայն արդարութեան ու իրաւունքի յաղթանակ կը համարէ: Այս պիտի Սուրիան կը դառնայ Լիբանանէն ետք երկրորդ արաբական պետութիւնը, որ Հայոց Ցեղասպանութիւնը կը ճանչնայ»:



Իսկ սեուտական «Աճըլ Նիւզ» թերթը վկայակոչեց Սուրիոյ խորհրդարանի նախագահ Համմուտա Սապպաղին խորհրդարանի նիստին ընթացքին արտասանած խօսքը եւ յայտնեց, որ նախորդ օրերուն սուրիական բանակը դէմ դրաւ Թուրքիոյ իրարայաջորդ յարձակումներուն եւ յաղթանակ արձանագրեց: Թերթը յիշեց, որ Էրտողանի իշխանութիւնը խստի դատապարտած է 1915-ի իրադարձութիւններուն «Ցեղասպանութիւն» անուանումը Սուրիոյ խորհրդարանին կողմէ: «Հայոց Ցեղասպանութիւնը ճանչնալով կը կանխելք օսմանական վարքագիծը որդեգրած Էրտողանի յառաջիկայ ոճիրները» վերնագիրով «Մայատին» պատկերասփիւռային կայանի կայքը անդրադարձաւ ճանաչման եւ վկայակոչեց Սուրիոյ խորհրդարանի նախագահ Համմուտա Սապպաղի հետեւեալ խօսքը. «Հայերուն կողքին, սուրիաներն ու ասորիներն ալ պատմութեան ընթացքին Օսմանեան Կայսրութեան ոճիրներուն զոհերը դարձան»:

Եւ վերջապէս բրիտանական BBC Arabic կայքը բաւարարուեցաւ հետեւեալ մեկնաբանութեամբ. «Սուրիոյ խորհրդարանին կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը Թուրքիոյ գայրոյթը յառաջացուց»:



Լուրեր Հայաշխարհին

«ՍՈՒՐԻՈՅ ԺՈՂՈՎՈՐԴՐԸ 100 ՏԱՐԻՆԵՐ ԱՌԱՅ ԱՐԴԷՆ ԻՍԿ ՃԱՆՉՅԱՍԵ ԷՐ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ԻՐ ՀՈՂԻՆ ՎՐԱՅ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԳՐՈՂՆԵՐԸ», ԵՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Սուրիոյ Հանրապետութեան նախագահ Պաշար ալ Ասատին ուղարկուած իր նամակին մէջ ԵՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոս ջերմօրէն ողջունեց Սուրիոյ Հանրապետութեան Խորհրդարանին կողմէ, Հայոց Ցեղասպանութեան միաձայնութեան ճանաչումը:

«Վստահ ենք, որ դուք եւ ձեր հանգուցեալ հայրը կարեւոր դեր ունեցաք ցեղասպանութեան դատապարտումի ու ճանաչումի գծով՝ ձեր հրապարակային կեցուածքներու ճամբով անցնող տարիներու ընթացքին: Այս առիթով, կ'ուզենք նաեւ շեշտել, որ Սուրիոյ ժողովուրդը իր բաղկացուցիչ տարրերով՝ իր պետութեամբ ու բոլոր կառոյցներով արդէն իսկ 100 տարիներ առաջ ճանչցած էր Հայոց Ցեղասպանութիւնը, երբ իր հողին վրայ ընդունած էր ցեղասպանութենէն վերապրող հայ ժողովուրդի գաւակները:



Դուք ցեղասպանութիւնը ճանչցած եղաք, երբ ցեղասպանութենէն ճողոպրած մեր գաւակներուն հետ Սուրիոյ ժողովուրդը կիսեց իր հացն ու ջուրը: Ահա թէ ինչու մեր ժողովուրդը Սփիւռքին մէջ յատուկ ուրախութեամբ կ'ողջունէ Սուրիական Խորհրդարանի այս որոշումը: Մեր բարձր գնահատանքը կ'ուզենք յայտնել Սուրիոյ Խորհրդարանին, Ձերոյ վստահութեան եւ Սուրիոյ ժողովուրդին՝ մաղթելով ամբողջական խաղաղութիւն եւ բարգաւաճ օրեր Սուրիոյ Հանրապետութեան»:

Յայտնենք, որ Վեհափառ Հայրապետը նմանօրինակ նամակ մը յղեց նաեւ Սուրիոյ Խորհրդարանի նախագահին:

ՀՅԴ ՀԱՅ ԴԱՏԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԸ Կ'ՈՂՋՈՒՆԷ ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ՝ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱՉԵԻ ՈՐԴԵՂՈՒՄԸ

ՀՅԴ Հայ Դատի Կեդրոնական Խորհուրդը հաղորդագրութեամբ մը ողջունեց Սուրիոյ Խորհրդարանին՝ հայոց դէմ գործադրուած Ցեղասպանութեան բանաձեւի որդեգրումը եւ շնորհաւորեց սուրիահայութիւնը այս կարեւոր իրագործումին առիթով:



«Յատուկ շնորհակալութիւն Սուրիոյ իշխանութեան ու մանաւանդ ասպընջական ժողովուրդին, որ ապաստան շնորհեց Ցեղասպանութենէն ճողոպրած մագորդացիին:

Սուրիոյ կողմէ այս ճանաչումը եւ դատապարտումը կրկնակի կարեւորութիւն ունի, որովհետեւ սոսկ իրողութեան հաստատումէն անդին կ'անցնի, կը վկայէ Սուրիոյ ժողովուրդի ականատես ըլլալու հանգամանքը՝ Թուրքիոյ կողմէ իր իսկ

հողերուն վրայ գործադրուած մեծ ոճիրին եւ կոչ կ'ուղղէ՝ պայքարելու ժխտումի քաղաքականութեան դէմ:

Շնորհակալութիւն մանաւանդ Սուրիական-Հայաստանեան Խորհրդարանական բարեկամական յանձնաժողովին եւ անոր նախագահ դոկտ. Նորա Արիստեանին, որոնք նախաձեռնեցին այս բանաձեւի գործընթացին օրէնսդիր պալատին մէջ:

Այս մեծ յաղթանակին համար կրկին կը շնորհաւորենք սուրիահայութիւնը, Սուրիոյ Խորհրդարանի հայագի պատգամաւորները եւ Հայ դատի բոլոր նուիրեալները», ըսուեցաւ հաղորդագրութեան մէջ»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ. «ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ՝ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆՉՄԱՆ ԲԱՆԱՉԵԸ ՀԱՅ-ՍՈՒՐԻԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՍՈՒԹԵԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆ Է»

«Սուրիոյ Խորհրդարանին կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման վերաբերեալ բանաձեւը վառ վկայութիւնն է հայ եւ սուրիացի ժողովուրդներու դարաւոր բարեկամութեան եւ փոխադարձ համակրանքին: Անկէկա ծանրակշիռ աւանդ է պատմական արդարութեան վերականգնման եւ ցեղասպանութիւններու կանխարգիլման համար», նշուած է Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեան՝ Սուրիոյ Խորհրդարանին կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման վերաբերեալ բանաձեւին վերաբերող յայտարարութեան մէջ:



Նախարարութիւնը կը նշէ. «Բարձր կը գնահատենք Սուրիոյ Խորհրդարանի՝ Օսմանեան պետութեան կողմէ իրականացուած Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման վերաբերեալ բանաձեւի ընդունումը:

«Երիտթրքական կառավարութեան կողմէ սանձազերծուած ցեղասպանութիւնը, որուն զգալի մէկ հատուածը իրականացած է այն ատեն Օսմանեան կայսրութեան տիրապետութեան տակ գտնուող Սուրիոյ տարածքին, հայ եւ սուրիացի ժողովուրդներու ընդհանուր պատմական յիշողութեան մաս կը կազմէ:

Սուրիացի ժողովուրդը՝ ականատեսը ըլլալով հայ ժողովուրդին նկատմամբ իրականացած եղեռնագործութեան, առաջիններէն էր, որ օգնութեան ձեռք երկարեց Ցեղասպանութեան զոհերուն: Հազարաւոր վերապրածներ Սուրիոյ մէջ վերագտան իրենց Նոր հայրենիքը՝ կազմաւորելով հայ ամենէն ծաղկուն համայնքներէն մէկը եւ իրենց ներդրումը ունեցան Սուրիոյ զարգացման գործին մէջ:

Այսօր, երբ դժուար պայմաններու մէջ կ'ապրի Սուրիոյ ժողովուրդը, մենք մեր համերաշխութիւնը եւ զօրակցութիւնը կը յայտնենք առկայ մարտահրաւերներու յաղթահարման գործին», ըսուած է հաղորդագրութեան մէջ:

ՀՅԴ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՄԱՐՄԻՆԸ ՈՂՋՈՒՆԵՑ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՃԱՆՉՆԱԼՈՒ ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՅԸ

ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի Մարմինը 13 Փետրուարին լիբանանեան լրատուամիջոցներուն հաղորդագրութիւն մը յղելով ողջունեց Սուրիոյ Խորհրդարանին կողմէ Հայոց Ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւի միաձայնութեամբ որդեգրումը:

Մարմինը իր գնահատանքը յայտնեց Սուրիոյ Խորհրդարանին կողմէ Հայոց Ցեղասպանութիւնը դատապարտող ու ճանչցող, այդ պատմական փաստը ժխտելու որեւէ փորձ դատապարտող եւ 20-րդ դարու առաջին ցեղասպանութեան համար Թուրքիան պատասխանատու նկատող բանաձեւի որդեգրումը:

Հայ Դատի Մարմինը յայտնեց, որ այս բանաձեւի որդեգրումը արդարութեան եւ իրաւունքի յաղթանակն է՝ յիշեցնելով, որ սուրիական հողերը այն վայրերն են, ուր օսմանեան պետութեան կողմէ գործադրուեցաւ ցեղասպանութեան ոճիրը:

ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի Մարմինը ընդգծեց, որ, այսպիսով Սուրիան դարձաւ Լիբանանէն ետք երկրորդ արաբական երկիրը, որ կը ճանչնայ Հայոց Ցեղասպանութիւնը:



ԳԱՐԵԳԻՆ Բ.-Ի ՆԱՄԱԿԸ ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱԶԻՆ

14 Փետրուարին ՆՍՕՏՏ Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Յայոց Կաթողիկոսը նամակ յղեց Սուրիոյ Արաբական Յանրապետութեան նախագահ Պաշտար ալ Ասատին՝ հայ ժողովուրդին անուով շնորհակալութիւն յայտնելով Սուրիոյ խորհրդարանին կողմէ Յայոց Տեղասպանութիւնը ճանչցող եւ դատապարտող բանաձեւի միաձայնութեամբ ընդունման համար:

«Մարդկութեան դէմ իրականացուած յանցագործութիւններու դատապարտումը եւ ժխտողականութեան մերժումը ամուր երաշխիք է կանխարգիլելու կրօնական եւ ազգային խտրականութեան պատճառով նոր ցեղասպանութիւններն ու ոճրագործութիւնները եւ կառուցելու խաղաղ ու համերաշխ աշխարհ:



Սուրիոյ ժողովուրդը այսօր վերահաստատեց աւելի քան 100 տարի առաջուան յանձնառութիւնն ու վճռականութիւնը իր նախնեաց, որոնք Յայոց Տեղասպանութեան դժնդակ տարիներուն ապաստան տուին հայրենազրկուած ու տարագրուած մեր ազգի զաւակներուն: Տէր Զօրի անապատին մէջ տասնամեակներ առաջ, ձեր բարեյիշատակ հօր՝

Հաֆեզ ալ Ասատի նախագահութեան շրջանին Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ կառուցումը դարձաւ հերթական արձանագրումը Յայոց Տեղասպանութեան հարցով Սուրիոյ իշխանութիւններուն որդեգրած կեցուածքին: Վերջերս բազմիցս ակնատես եղած ենք ձեր եւ ձեր ժողովուրդի ընդգծուած բարեհոգութեան ու ուշադրութեան առ մեր ժողովուրդը, որոնք խօսուն արտայայտութիւնն են Սուրիոյ հողին վրայ վեր խոյացած հայկական սրբավայրերը, մշակութային եւ կրթական հաստատութիւնները, սուրիահայ համայնքի բարեշէն կեանքի բազմաթիւ վկայութիւնները», ըսուած է վեհափառ հայրապետի նամակին մէջ:

Նորին Սրբութիւնը, զօրակցութիւն յայտնելով Սուրիոյ բարեպաշտ ժողովուրդին, մաղթած է, որ երկրէն ներս հաստատուի բաղձալի խաղաղութիւնն ու անդորրը եւ իրականութիւն դառնան դժուարութիւններ յաղթահարող եղբայր ժողովուրդի պայծառ կեանքի երազները:

ՂԱԻԹ ԻՇԽԱՆԵԱՆ.- ԸՆՈՐՀԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԻԱԿԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԲԱՐԵՎԱՄԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

Որպէս ՀՀ դաշնակցութեան մեծ ընտանիքի մէկ անդամ եւ Հայ Դատի պահանջատէր, իմ խորին երախտագիտութիւնը կը յայտնեմ Սուրիոյ խորհրդարանին՝ Յայոց Տեղասպանութիւնը ճանչցող բանաձեւի ընդունման առիթով: Սուրիան այն պետութիւններէն է, որ հանգրուան ու ապաստան եղաւ Տեղասպանութենէն մազապուրծ հայերուն համար: Սուրիան այն պետութիւնն է, որ տեսած է Թուրքիոյ արիւնոտ ձեռագիրը եւ քաղած է թրջական խարդաւանքներուն պտուղները: Ընտրակալութիւն կը յայտնեմ Սուրիական-Հայաստանեան Բարեկամական Յանձնաժողովին եւ յանձնաժողովի ղեկավար դոկտոր Նորա Արիսեանին՝ այս բանաձեւը կեանքի կոչելու եւ զայն իրականացնելու համար գործադրած ջանքերուն համար:



տան եղաւ Տեղասպանութենէն մազապուրծ հայերուն համար: Սուրիան այն պետութիւնն է, որ տեսած է Թուրքիոյ արիւնոտ ձեռագիրը եւ քաղած է թրջական խարդաւանքներուն պտուղները: Ընտրակալութիւն կը յայտնեմ Սուրիական-Հայաստանեան Բարեկամական Յանձնաժողովին եւ յանձնաժողովի ղեկավար դոկտոր Նորա Արիսեանին՝ այս բանաձեւը կեանքի կոչելու եւ զայն իրականացնելու համար գործադրած ջանքերուն համար:

ԵՐԵՍՓՈՒՄԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԸՆՈՐՀԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՆԱՄԱԿ ՅՂԵՑ ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱԶԻՆ

ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ, Երեսփոխան Յակոբ Բագրատունի Երկուշաբթի, 17 Փետրուարին Յայկական Երեսփոխանական Պլոքին, անձամբ իր ու իր ներկայացուցած ժողովրդային զանգուածին անուով շնորհակալական նամակ մը յղեց Սուրիոյ խորհրդարանի նախագահին եւ խորհրդարանին՝ Օսմանեան Կայսրութեան կողմէ գործուած Յայոց Տեղասպանութիւնը ճանչնալու եւ դատապարտելու իր պատմական որոշումին առիթով: «Այս որոշումը խօսուն արտայայտութիւնն է երկու ժողովուրդներուն՝ հայոց եւ սուրիահայերուն միջեւ գոյութիւն ունեցող պատմական խոր յարաբերութիւններուն, ինչպէս նաեւ այն ճշմարտութեան, որ դուք կը զօրակցիք մարդկային արդարութեան, իր իրաւունքներուն համար պայքարող իրաւագրկուած ժողովուրդներուն դատին», յայտնեց Յ. Բագրատունի: Ընտրակալական իր նամակին մէջ Երեսփոխան Բագրատունի դիտել տուաւ, որ Սուրիոյ հողերը հայութեան արեամբ շաղախուած են՝ Ա. Աշխարհամարտին ընթացքին, երբ Թուրքիա գործեց Յայոց Տեղասպանութիւնը, ինչպէս նաեւ ծրագրեց ու բռնագաղթի ենթարկեց հարիւր հազարաւոր հայեր, որոնք Սուրիոյ մէջ գտան իրենց ապաստանն ու հայրենիքը: «Կը վերահաստատենք մեր խոր երախտագիտութիւնը այս ողջունելի քայլին համար եւ ձեզի յաջողութիւն ու քաջութիւն կը մաղթենք՝ յուսալով, որ կը շարունակէք դիմակայել ամէն տեսակի ահաբեկչութիւն, բռնատիրութիւն եւ երկիրն ու ժողովուրդը թիրախ դարձնող հարուած», եզրափակեց Երեսփոխան Յակոբ Բագրատունի:



Երեսփոխան Յակոբ Բագրատունի Երկուշաբթի, 17 Փետրուարին Յայկական Երեսփոխանական Պլոքին, անձամբ իր ու իր ներկայացուցած ժողովրդային զանգուածին անուով շնորհակալական նամակ մը յղեց Սուրիոյ խորհրդարանի նախագահին եւ խորհրդարանին՝ Օսմանեան Կայսրութեան կողմէ գործուած Յայոց Տեղասպանութիւնը ճանչնալու եւ դատապարտելու իր պատմական որոշումին առիթով: «Այս որոշումը խօսուն արտայայտութիւնն է երկու ժողովուրդներուն՝ հայոց եւ սուրիահայերուն միջեւ գոյութիւն ունեցող պատմական խոր յարաբերութիւններուն, ինչպէս նաեւ այն ճշմարտութեան, որ դուք կը զօրակցիք մարդկային արդարութեան, իր իրաւունքներուն համար պայքարող իրաւագրկուած ժողովուրդներուն դատին», յայտնեց Յ. Բագրատունի: Ընտրակալական իր նամակին մէջ Երեսփոխան Բագրատունի դիտել տուաւ, որ Սուրիոյ հողերը հայութեան արեամբ շաղախուած են՝ Ա. Աշխարհամարտին ընթացքին, երբ Թուրքիա գործեց Յայոց Տեղասպանութիւնը, ինչպէս նաեւ ծրագրեց ու բռնագաղթի ենթարկեց հարիւր հազարաւոր հայեր, որոնք Սուրիոյ մէջ գտան իրենց ապաստանն ու հայրենիքը: «Կը վերահաստատենք մեր խոր երախտագիտութիւնը այս ողջունելի քայլին համար եւ ձեզի յաջողութիւն ու քաջութիւն կը մաղթենք՝ յուսալով, որ կը շարունակէք դիմակայել ամէն տեսակի ահաբեկչութիւն, բռնատիրութիւն եւ երկիրն ու ժողովուրդը թիրախ դարձնող հարուած», եզրափակեց Երեսփոխան Յակոբ Բագրատունի:

ՔՈՒԷՅՈՒՆԱՅՈՒԹԻՒՆԸ ԻՐ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԸՆՈՐՀԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՅԱՅՏԵՆ ՍՈՒՐԻՈՅ ՊԵՏՈՒԹԵԱՆ

Երկուշաբթի, 17 Փետրուար 2020-ին, քուէյթահայութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին թեմի կաթողիկոսական փոխանորդ Հոգ. Ս. Պետրոս Վրդ. Մանուէլեան, Արժ. Ս. Արտակ Ա. Զեյն. Զեհեայեան, Զուէյթի Թեմի Երեսփոխանական Ժողովի եւ Ազգային



Վարչութեան ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Զուէյթի Ազգային Վարժարանի Տնօրէնը այցելութիւն մը տուաւ Զուէյթի մէջ Սուրիոյ Դեսպանատուն եւ քուէյթահայութեան կողմէ իր երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեց Սուրիոյ Օրէնսդիր եւ Գործադիր իշխանութիւններուն՝ տարեթիւս 13 Փետրուարին Սուրիոյ Ազգային Ժողովին կողմէ Յայոց Տեղասպանութիւնը ընդունող ու դատապարտող բանաձեւի որդեգրման առնչութեամբ:

Պատուիրակութիւնը դիմաւորուեցաւ Զուէյթի մէջ Սուրիոյ Դեսպանի Գործակատար՝ Պրն. Մուսթաֆա Տայյուպի կողմէ, որ բարձր գնահատեց սուրիահայութեան հաւատարմութիւնը սուրիական հայրենիքին նկատմամբ եւ անոր ունեցած ողջունելի դերակատարութիւնը Սուրիոյ ծաղկման ու բարգաւաճման գործընթացին մէջ:

Պրն. Տայյուպ խստօրէն դատապարտեց թրջական իշխանութիւններու կողմէ մէկ դար առաջ եւ մինչ օրս շարունակուող բարբարոսական արարքները:

ՀԱՌՅԱԶՈՂՅ

ԴՈԿՏ. ՆՈՐԱ ԱՐԻՍԵԱՆ. «ՍՈՒՐԻԱԿԱՆ ԱՐԻՒՆԵՐԸ ԱՆԺԽՏԵԼԻՕՐԷՆ ԿՐ ՎԿԱՅԵՆ ՆԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ»

Հինգշաբթի, 13 Փետրուար 2020-ին Սուրիոյ խորհրդարանը միաձայնութեամբ ճանչցաւ ու դատապարտեց Հայոց Ցեղասպանութիւնը: Այս առիթով «Գանձասար» հետեւեալ հարցազրոյցը ունեցաւ Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան, Սուրիական-Հայաստանեան Խորհրդարանական Բարեկամութեան Յանձնաժողովի նախագահ ղոկտ. Նորա Արիսեանի հետ:

«Գանձասար»- Հայոց Ցեղասպանութեան հարցը նախապէս ալ արծարծուած էր Սուրիոյ խորհրդարանէն ներս, այս անգամ, սակայն,



խորհրդարանը քայլ մըն ալ առաջ երթալով ցեղասպանութիւնը ճանչցող ու դատապարտող որոշում գոյացուց: Ինչպիսի՞ գարագոյններու հետեւանքով այս յառաջընթացը արձանագրուեցաւ:

Նորա Արիսեան- Նախքան 13 Փետրուար 2020-ի Սուրիոյ խորհրդարանի նիստին Հայոց Ցեղասպանութեան մասին բանաձեւին օրակարգի վրայ տեղ գտնելը, 20 Յունուար 2020-ին, Սուրիական-Հայաստանեան Խորհրդարանական Բարեկամութեան Յանձնաժողովը, որ հեղինակն է ցեղասպանութեան ճանաչման բանաձեւի նախագիծին, գումարեց իր արտակարգ նիստը, ուր Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցը լայն քննարկման առարկայ դարձաւ: Այնուհետեւ, յանձնաժողովը նիստին տեղեկագիրը ներկայացուց խորհրդարանի նախագահութեան, որ պէտք է խորհրդարանական ժողովի օրակարգի կէտ դառնայ ան: Պէտք է ընդգծել, որ 2015-ին, Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին առիթով, խորհրդարանը յատուկ նիստ տրամադրած էր Հայոց Ցեղասպանութեան հարցի քննարկման: Միւս կողմէ, սոյն նստաշրջանին, տարբեր առիթներով, կարգ մը երեսփոխաններ դատապարտման հարցին արծագանգած էին:

«Գ.»- Դուք, ձեր մասնագիտութեան բերումով, ուսումնասիրած էք Հայոց Ցեղասպանութեան առնչուող Սուրիոյ վերաբերական արխիւները, մամուլը, սուրիացի մտաւորականներու վկայութիւնները եւ այլն: Այդ բոլորը ինչպիսի՞ արժէք կը ներկայացնեն:

Ն.Ա.- Կը խորհիմ, որ գիտահետազոտական աշխատանքները մեծ դեր ունին հարցերու օրինակաւացման առումով, մանաւանդ սուրիական աղբիւրները, որոնք անժխտելիօրէն կը վկայեն Հայոց Ցեղասպանութեան պատմական իրողութեան մասին: Զննարկման ընթացքին անհրաժեշտ էր ներկայացնել սուրիական աղբիւրներ, որոնք արդէն իսկ բազմաթիւ վկայութիւններ կը պարունակեն: Վկայութիւններ, որոնք հիմք հանդիսացան նաեւ Հայոց Ցեղասպանութեան առնչուող բանաձեւին, որուն մասին ակելի քան մէկ ժամ տեւած էլոյթներով արտայայտուեցան սուրիացի երեսփոխաններ:

«Գ.»- Սուրիոյ խորհրդարանի ճանաչումը կը տարբերի այլ երկիրներու խորհրդարաններու ճանաչումէն, որովհետեւ Սուրիան ու անոր ժողովուրդը վկայ են նաեւ ցեղասպանութեան: Աւելի քան 105 տարի անց, երկրի ներկայ պայմաններուն մէջ, ինչ ուղերձներ կը պարունակէ այս ճանաչումը միջազգային ընտանիքին:

Ն.Ա.- Սուրիոյ խորհրդարանին կողմէ որդեգրուած բանաձեւին մէջ յստակօրէն կ'օգտագործուի «Հայոց Ցեղասպանութիւն» բառերը եւ գայն դատապարտելու ու ճանչնալու հանգամանքը: Կարեւոր հնչեղութիւն ունեցաւ նաեւ բանաձեւին մէջ Խորհրդարանին կողմէ ուղղուած աշխարհի խորհրդարաններուն եւ միջազգային հանրութեան՝ ճանչնալու եւ դատապարտելու Հայոց Ցեղասպանութիւնը: Բանաձեւը կը պարունակէ մարդկային, քաղաքական եւ իրաւական ուղերձներ:

ՆԱԽԱԳԱՅ ԱՍՍՏ. ...

Սկիզբ՝ էջ 1

մեկնելով Հալէպի մեր հարազատներուն հայրենասիրութենէն եւ հաւատարմութենէն, քաջ իմանալով, որ սուրիական բանակը պիտի տապալէ թշնամիին ծրագիրները: Այդպէս ալ եղաւ: Հալէպը պարտաւոր էր սուղ գին վճարել, համազօր իր ժողովուրդին ազգային կեցուածքին ու հզօրութեան: Այն ժողովուրդին, որ տարիներ շարունակ ենթակայ ըլլալով ահաւոր հրթիռակոծումներու, տասնեակ հազարաւոր նահատակներ ու վիրաւորներ տուաւ, այրիներ, որբեր ու որդեկորոյս մայրեր ունեցաւ: Այն ժողովուրդին, որ տարիներ շարունակ պաշարման ենթակայ ըլլալով մնաց առանց ջուրի, էլէկտրականութեան եւ կենսական այլ միջոցներու, որպէսզի ծնրադրէ, յանձնուի: Ինկող իւրաքանչիւր հըրթիռի հետ, թշնամին կը ջանար քանդել ու կերպարանափոխել պատմական Հալէպը, որպէսզի Դամասկոսի հետ միասին հայրենիքին տնտեսական թռիչքը ապահովող այս քաղաքը ծնրադրէր տոլարին դիմաց ու ստորանար, դաւադրութիւն հիւսել հայրենիքին դէմ ու դաւաճաններու կարգին անցնէր: Այսպիսի ծրագիրներ կը տողանցէին մեր թշնամիներուն երեւակայութեան մէջ:

Իրականութեան մէջ, սակայն, իւրաքանչիւր ինկած հրթիռի հետ, ինկաւ մեր ժողովուրդին վախը, անոր փոխարինեց պայքարի վճռակամութիւնը: Նահատակուող իւրաքանչիւր գինուորի փառքը հիւսելով, հալէպցիին ազգային ոգին եւ հայրենասիրութիւնը շեշտադրուեցան: Իրականութեան մէջ, Հալէպը պահպանեց պատմական իր ինքնատիպ դիմագիծը: Հալէպցիին պաշարուած ըլլալով մէկտեղ չընկճուեցաւ: Ան յամարօրէն աշխատեցաւ ու իր ապրուստը ապահովեց: Զաղաքը, հակառակ իր աղետալ վիճակին, մնաց բանուկ, իր համեստ կարելիութիւններով իսկ նպաստելով երկրի տնտեսութեան:

Ես վստահ եմ, որ այսպիսի պայքարն ու դիմադրողականութիւնը կը բխին հայրենասիրութենէն, պատկանելիութեան գիտակցութենէն: Այս դիմադրողականութեան ու գիտակցութեան շնորհիւ Հալէպը պատերազմի մոխիրներէն պիտի յառնի ու պիտի վերականգնին անոր առաջնորդող դերն ու արժէքը Սուրիոյ տնտեսութեան մէջ»:

Նախագահը ակելցուց. «Ճիշդ է որ քաղաքին ազատագրումը 2016-ին չբերաւ պէտք եղած խաղաղութիւնը եւ Հալէպը մնաց ատելութեան արկերու թիրախ, ճիշդ է որ ճակատամարտի մը յաղթելը չի նշանակեր պատերազմին յաղթել, սակայն այս մէկը ճշմարիտ կրնայ ըլլալ՝ զուտ գինուորական դիտանկիւնէ նայուած, իսկ ազգային տրամաբանութեամբ, յաղթանակը կը սկսի առաջին իսկ օրէն դիմադրողականութիւն ցուցաբերելով: Այս տրամաբանութեամբ է, որ Հալէպն ու Սուրիան յաղթեցին: Ամէնքս յաղթեցինք այն վախին, զոր փորձեցին

մեր մէջ արթնցնել, յաղթեցինք այն սին գաղափարներուն, զորս փորձեցին մեր ուղեղներուն մէջ ամրագրել, յաղթեցինք անշատողականութեան, ատելութեան ու դաւաճանութեան եւ բոլոր անոնց, որոնք այս գաղափարները կը մարմանաւորեն ու անոնցմով կ'ապրին: Հակառակ այս բոլորին, մենք կը գիտակցեցինք, որ այս ազատագրումը չի նշանակեր պատերազմի աւարտ, չի նշանակեր դաւադրութեան վերացում, ոչ ալ ահաբեկչութեան ոչնչացում կամ թշնամիի նահանջ... բայց անպայմանօրէն կը նշանակէ այդ բոլորին անարգանքը, որ նախաքայլն է անոնց վերջնական պարտութեան՝ ուշ կամ կանուխ... Կը նշանակէ նաեւ, որ մենք պիտի չհանգչինք, այլ պիտի պատրաստուինք գալիք ճակատամարտերու: Հետեւաբար Հալէպի եւ Իտիպի գիւղական շրջաններու ազատագրումը պիտի շարունակուի, հակառակ հիւսիսէն եկած կարգ մը սին ձայնային պղպտակներու, այնպէս ինչպէս պիտի շարունակուին Սուրիոյ ամբողջական ազատագրումը եւ խաղաղութեան վերականգնումը»:

Իր խօսքին մէջ նախագահ Ասատ շեշտեց. «Սուրիական բանակը պիտի չվարանի իր ազգային պարտաւորութիւնները կատարել եւ պիտի շարունակէ մնալ այնպէս ինչպէս եղած է՝ ժողովուրդէն ծնած եւ ժողովուրդին ծառայող... Պատմութեան ընթացքին բոլոր յաղթական բանակները իրենց կողքին ունեցած են ժողովուրդը, եւ իրենք՝ ժողովուրդին կողքին եղած են: Ահա այս է որ տեսէք Հալէպի եւ Սուրիոյ այս քաղաքներուն մէջ... երբ դուք բանակը գրկաբաց ընդունեցիք, ան պաշտպանեց ձեզ եւ ձեզի համար գոհուեցաւ»:

Նախագահը դիտել տուաւ. «Երբ ուրախութեան այս պահերը կ'ապրինք, յիշենք, որ անոնք իրականացան մեզի համար գոհուած սիրելիներու բացակայութեան առթած տառապանքով ու տխրութեամբ: Արդարեւ, կը խոնարհինք մեր նահատակներու յիշատակին ընդառաջ եւ կը մեծարենք անոնց ընտանիքները... Յաղթանակը անոնց կը նուիրուի, որովհետեւ անոնք էին յաղթանակի իսկական կերտիչները... ողջոյն անոնց ծնողներուն դաստիարակութեան, ողջոյն նահատակներուն զոհողութեան եւ ողջոյն մեր բանակի իւրաքանչիւր գինուորին: Անոնք կը դիմագրաւեն ցուրտն ու բուքը, որպէսզի մենք ապրինք խաղաղ, տաք ու կեանք»:

Նախագահը եզրափակելով իր խօսքը, ողջոյն ուղղեց. «Մեր եղբայրներուն, բարեկամներուն ու դաշնակիցներուն, որոնք թեւ ու թիկունք կանգնեցան սուրիական բանակին թե՛ գետնի վրայ եւ թե՛ երկինքին մէջ՝ արծիւի նման: Անոնց արիւնը միախառնուելով մեր բանակի արեան հետ, ոռոգեց Հալէպի հողը: Այն Հալէպին, որ իր հայրենիքին ու պատմութեան հաւատարիմ մնաց ու երբեք պիտի չմոռնայ իրեն համար գոհուողները, պիտի վերականգնէ երբեմնի իր փառքը եւ ակելի ուժեղ դառնայ»:

ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԹ ԵՒ ՏՕՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՀՀ ՍՈՒՐԻՅԱԿԱՆ ԴԵՄՊՈՒՆԱՏԱՆ ՄԷՋ.«ՄԵՐ ՃԱԿԱՏԱԳԻՐՆԵՐԸ ՆՈՅՆԱՆՄԱՆ ԵՆ»

Հայաստանի Գերագոյն Մարմին կից Հայրենապարճներու Խորհրդապետութեան գրասենեակի «Երթ՝ Շնորհակալութեան» խորագիրով քայլերթի մեկնարկին, անդրադառնալով Սուրիոյ խորհրդարանի կողմէն օրեր առաջ Հայոց Ցեղասպա-

Մինասեանը՝ շնորհակալութիւն յայտնելով Սուրիոյ իշխանութիւններուն, երկրի խորհրդարանի բոլոր այն պատգամաւորներուն, որոնք նախաձեռնեցին եւ իրականացուցին Հայոց Ցեղասպանութեան ճանաչումն ու դատապարտումը: Սկստուներու թմբուկներու ձայնով երթի մասնակիցները դիմաւորեց ԶԳ-ի Սուրիոյ Արաբական Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Մուհամմետ Հաճ Իպրահիմը:



նութեան ճանաչման եւ դատապարտման՝ Yerkir.am-ի հետ գրոյցի ընթացքին ԶԳ-ի ՀԳՄ անդամ Արծուիկ Մինասեան յայտնեց, որ Սուրիոյ խորհրդարանի՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման մասին բանաձեւը կարելի է պատմական համարել նաեւ այն առումով, որ անոր մէջ առկայ է «Արեւմտեան Հայաստան» եզրոյթը: Ռուսաստանի, Կիպրոսի եւ Սլովակիոյ բանաձեւերուն հետ այս իմաստով բաւական ընդհանրութիւններ ունեցող այս բանաձեւին մէջ յստակ ուղերձ կայ, որ հայութիւնը ցեղասպանութեան ենթարկուած է իր պատմական հայրենիքին մէջ՝ Արեւմտեան Հայաստանի մէջ: Այսինքն՝ հոս խօսքը նաեւ հայրենազրկման եւ անկէ բխող փոխհատուցման մասին է, որ աշխարհին կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման ընթացքը նոր մակարդակի կը բարձրացնէ:

ԳՄ անդամը ծափահարութիւններով յատուկ շնորհակալութիւն յայտնեց նաեւ Սուրիոյ Հանրապետութեան նախագահ Պաշտօնաւար Գաթաբի, որ ոչ միայն արժեւորած է ազգային փոքրամասնութիւններու իրաւունքները եւ իր կամքով ու վճռականութեամբ ստեղծած է հայութեան բարեկեցութեան ապահովման, ներգրաման պայմաններ, թէւ այս ծանր փուլին



նութեան ճանաչման եւ դատապարտման մասին բանաձեւը կարելի է պատմական համարել նաեւ այն առումով, որ անոր մէջ առկայ է «Արեւմտեան Հայաստան» եզրոյթը: Ռուսաստանի, Կիպրոսի եւ Սլովակիոյ բանաձեւերուն հետ այս իմաստով բաւական ընդհանրութիւններ ունեցող այս բանաձեւին մէջ յստակ ուղերձ կայ, որ հայութիւնը ցեղասպանութեան ենթարկուած է իր պատմական հայրենիքին մէջ՝ Արեւմտեան Հայաստանի մէջ: Այսինքն՝ հոս խօսքը նաեւ հայրենազրկման եւ անկէ բխող փոխհատուցման մասին է, որ աշխարհին կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման ընթացքը նոր մակարդակի կը բարձրացնէ:

մէջ, երբ Սուրիան կը դիմագրաւէ շարք մը ծայրայեղ ծանր մարտահրաւերներ, կը պայքարի պետութիւններու՝ ցեղասպանութեան տարրեր պարունակող վարքագիծին դէմ, կարենալով այսպիսի կարեւոր ուղերձներով հաստատել մեր երկու բարեկամ ժողովուրդներու յարատեւ ապրելու, գոյատեւելու եւ սեփական պետականութիւնը ունենալու վճռականութիւնը:

«Ոչ միայն Դաշնակցութիւնը, այլեւ իւրաքանչիւր հայ այս փաստը կ'ընկալէ որպէս պատմական ճշմարտութիւն, մեր հայրենիքը վերականգնելու որպէս մէկ քայլ: Մեր միացեալ հայրենիքի կերտման ճանապարհին սա անհրաժեշտ քայլ է: Սա հնարաւորութիւն կու տայ ուղղելու մեր խօսքը աշխարհին, այն երկրներուն, որոնք տակաւին չեն ճանաչած: Օր առաջ ճանաչումը կը կանխէ աշխարհի մէջ հնարաւոր նոր ցեղասպանութիւնները, իրաւունքներու վերականգնումը եւ հատուցումը կ'ենթադրէ ապագային որեւէ երկրի կամ իշխանութեան կողմէ ազգի նկատմամբ ցեղասպանական գործողութեան բացառում», իր ելոյթով փաստեց Արծուիկ Մինասեան եւ աւելցուց, որ, որպէս բարեկամ պետութեան եւ ժողովուրդին հանդէպ ունեցած երախ-

տագիտութեան արտայայտութիւն, Հայաստան այսօր՝ Սուրիոյ պատմութեան ծանր փուլին մէջ, սիրալոյսով տեղ տուաւ նաեւ բազմաթիւ սուրիացիներու:

«Մեր ճակատագիրները Նոյնանման են: Մենք պէտք է միասին դիմակայենք Թուրքիոյ ցեղասպանական քաղաքականութիւնը: Թուրք-ատրպէյճանական ցեղասպանական վարքագիծը օր առաջ պէտք է կանգ առնէ», խօսքը աւարտեց Արծուիկ Մինասեան եւ ԶԳ Սուրիոյ դեսպանին յանձնեց ԶԳ-Հայաստանի Գերագոյն Մարմինի երախտիքի խօսքը պարունակող թղթածրարը:

Պաշտօնական ձեռնարկին իրենց երախտիքի խօսքը արտասանեցին նաեւ ՄԴԶ-ի ներկայացուցիչ Վազգէն Մետրաքեան, Հայաստանի մէջ Սուրիոյ ուսանողներուն անունով՝ Շուշան Հալլաճեան, դոկտոր Ճորճ Բարսեղեան եւ այլք:

Տօնական ընդունելութեան խօսքով հանդէս եկաւ նաեւ արտակարգ եւ լիազօր դեսպան Մուհամմետ Հաճ Իպրահիմ: Ողջունելով հայութեան ներկայացուցիչները ԶԳ Սուրիոյ Հանրապետութեան նստավայրէն ներս՝ դեսպանը յայտնեց, որ մեծ պատիւ է հայութեան ունենալ Սուրիոյ ժողովուրդը, ուժեղ Սուրիոյ կողքին՝ նախագահ Պաշտօնաւար Գաթաբիի հետ միասին:



Աստի գլխաւորութեամբ: «Սուրիան իր ռոնները բացաւ ցեղասպանութենէն մազապուրծ եղածներուն առջեւ, այն ցեղասպանութեան, որ կատարուեցաւ Օսմանեան Թուրքիոյ մէջ, եւ Նոյնը կը կատարուի այսօր՝ իրենց ժառանգորդ Թուրքիոյ պետութեան կողմէ», փաստեց Սուրիոյ դեսպանը:

տեղ դեսպանը, աւելցնելով՝ թէ հպարտ է, որ Սուրիոյ ժողովրդական ժողովը ընդունեց Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչող, դատապարտող եւ պատմական ճշմարտութիւնը վեր հանող բանաձեւը:

«Հայ ժողովուրդը կրցաւ ոտքի կանգնիլ եւ յաղթահարել ցեղասպանութիւնը, որ կատարուեցաւ Արեւմտեան Հայաստանի մէջ եւ Սուրիոյ հողերուն վրայ», ըսաւ դեսպանը՝ աւելցնելով, որ այսօր Սուրիոյ ժողովուրդը եւ բանակը նախագահ Պաշտօնաւար Գաթաբիի գլխաւորութեամբ ամեն օր նոր յաջողութիւններ կը գրանցէ, եւ ինքը կը խոս-



տանայ, որ Սուրիան ապագային աւելի հզօր եւ ուժեղ պիտի դառնայ, քան առաջ:

Դեսպանը նաեւ ողջոյնի խօսք յղեց Սուրիոյ արաբական բանակի հերոսներուն, որոնք նոր նուաճումներ կ'արձանագրեն, որպէսզի Սուրիոյ ժողովուրդը ապրի ապահով եւ խաղաղ: Ան նաեւ շնորհակալութիւն յայտնեց օժանդակութեան համար, որ տրամադրած է ԶԳ կառավարութիւնը՝ սուրիական ճգնաժամի ողջ ընթացքին: Դեսպանը մասնաւորապէս շնորհակալութիւն յայտնեց հայկական մարդասիրական առաքելութեան իւրաքանչիւր անդամին, որ կը գտնուի Հալէպի մէջ եւ ականազերծման աշխատանքներ կ'իրականացնէ: Ըստ դեսպանին, զանոնք ցանած են այդ ցեղասպանութիւնը իրագործողներուն ժառանգորդները:

ԶԳ Սուրիոյ Արաբական Հանրապետութեան դեսպանատան մէջ տեղի ունեցած տօնական ընդունելութեան աւարտին հայ ժողովրդական պարերու ներկայացումով հանդէս եկաւ Երեւանի Մ. Հերացի անուան պետական բժշկական համալսարանի պարախումբը:

Վ. Սարգսեան

«ԲՐԻՍԱՓՈՐ» ԳՐԱԴԱՐԱՆԻ ՎԵՐՉՈՒԹԻՒՆ
Հովանաւորութեամբ՝ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ ԳԵՐԸ. Ս. ՄԱՍԻՍ Մ. ԵՊՄ. ԶՕԳՈՒԵԱՆԻ
«ԲՐԻՍԱՓՈՐ» ԳՐԱԴԱՐԱՆԻ
100 կամակի ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԶՈՒՅՁՆԱԼՆԵՒ ԵՒ ՎԱՃԱԿՔ
Կիրակի, 1 Էն 6 Մարտ 2020 ի երեկոյան ժամը 5:00-ին, Արամ Մանուկեան Ժողովրդային Տան «Լ.Շանթ» Մրահէն Ներս, Վիլլաներ-Տալալ:

ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ ՆԻՍՏԻՆ ԵՐԵՍՓՈՒՄՆ ԺԻՐԱՅՐ ՐԷԻՍԵՄՆԻ ԱՐՏԱՄԱՆԱԾ ԽՕՍՔԸ

Հինգշաբթի, 13 Փետրուար 2020-ին, Սուրիոյ խորհրդարանի 10-րդ նիստին ընթացքին, խորհրդարանի անդամ ժիրայր Րէիսեան Հայոց Ցեղասպանութեան ճանաչման ու դատապարտման բանաձեւի ընկերակցման ընթացքին արտասանեց հետեւեալ խօսքը.

«Խորհրդարանի մեծարգոյ՝ նախագահ,

ծին ուրացումն ու նոյն բարբարոսութիւններուն կրկնութիւնը այս անգամ Սուրիոյ մէջ, հետեւանք են անոր անպատիժ մնալուն եւ միջազգային ընտանիքին կողմէ դատապարտման եւ հաշուետուութեան չենթարկուելուն:

Տեղին է յիշել Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ուալիտ ալ Մուալլէմի հետեւեալ խօսքը. «Եթէ



Յարգելի՛ երեսփոխաններ, Սուրիոյ պատերազմի տարիներուն ահաբեկչութեան դէմ պատերազմ մղեցինք ու կը մղենք յանուն մեր ժողովուրդին արժանապատուութեան եւ Սուրիական Հայրենիքին խաղաղութեան: Չափազանցած չենք ըլլար եթէ ըսենք, որ մենք՝ սուրիացիներս, համայն մարդկութեան փոխարէն պատերազմեցանք ահաբեկչութեան ու այնպիսի բարբարոսութիւններու դէմ, որոնք անհաւատալի ու աննկարագրելի էին, սակայն կը կրկնուէին:

Հայ ժողովուրդը 19-րդ դարու վերջաւորութեան եւ 20-րդ դարու սկիզբը թրջական իշխանութիւններուն կողմէ՝ օսմանցի թէ իթթիհատական, ենթարկուեցաւ ծրագրուած ցեղասպանութեան, պոկուեցաւ իր արմատներէն: Ցեղասպանութենէն մազապուրծ, աստուածային հրաշքով փրկուած մեր ժողովուրդին մնացորդացը հասաւ Սուրիա՝ ապահովութեան ափ: Սուրիոյ ժողովուրդը գրկաբաց ընդունեց եւ պաշտպան հանդիսացաւ անոր՝ իր մարդկային բնոյթէն ու կրօնական ըմբռումներէն մեկնելով:

Սուրիան իր աշխարհագրական տարածքով եւ ժողովուրդով պատմական վկան դարձաւ Մեծ Եղեռնին: Այս իսկ պատճառով, երբ ինծի հարց կու տային, թէ Սուրիան ինչո՞ւ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման և չի նախաձեռնէր, կը պատասխանէի ըսելով, որ Սուրիոյ վկայութիւնը ճանաչումի բանաձեւերէն աւելի ուժեղ է: Այդուհանդերձ, հայոց, սուրիանիներուն եւ ասորիներուն դէմ ցեղասպանական ոճիրներուն իրականացումը եւ ոճրագոր-

միջազգային ընտանիքը անհրաժեշտ պատճառներով որդեգրել 1915-ին Հայոց Ցեղասպանութիւնը իրագործող Օսմանական Կայսրութեան դէմ, այսօր անոր ժառանգորդները չէին յանդներ իրենց գործակալներուն ձեռամբ նոյն ոճիրները գործելու սուրիական հողերուն վրայ»:

Սուրիոյ նախագահ Պաշշար ալ Ասատ եւս տարբեր հանդիպումներու եւ հարցազրոյցներու ընթացքին անդրադարձ կատարած էր Հայոց Ցեղասպանութեան: 27 Մայիս 2015-ին արտասանած իր խօսքին մէջ ան ըսած էր. «Այսօր Սուրիոյ ժողովուրդը, իր բոլոր բաղադրիչներով, կը տառապի այն բարբարոսութիւններէն, որոնց ենթարկուած էր հայ ժողովուրդը, թէկուզ տարբեր միջոցներով ու նպատակներով»:

Վերոյիշեալ տուեալներու լոյսին տակ շնորհակալութիւն կը յայտնեմ Սուրիական-Հայաստանեան Խորհրդարանական Բարեկամութեան Յանձնաժողովին՝ իր առաջարկած բանաձեւին համար: Կոչ կ'ուղղեմ խորհրդարանի իմ գործընկերներուս, քուէարկելու Հայոց Ցեղասպանութեան ճանաչման ու դատապարտման բանաձեւին ի նպաստ, Սուրիոյ ժողովուրդը ներկայացնող պաշտօնական այս հարթակէն, քաջ իմանալով որ այս երկրին հողն իսկ վկան է այդ սպանդին: Կոչ կ'ուղղեմ նաեւ Թուրքիայէն պահանջելու ճանաչում, հատուցում եւ հայ ժողովուրդի արդար իրաւունքներու վերականգնում՝ վերջ դնելու թրջական նմանօրինակ ոճրագործութիւններուն եւ ամենուր կանխելու նման սպանդներու իրագործումը»:

ՏԵԱՌՆՆԴԱՌԱԶԻ ՆԱԽԱՏՕՆԱԿԸ ՀԱՆԴԻՍԱՒՈՐԱՊԵՍ ՆՇՈՒԵՑԱՒ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԵՆ ՆԵՐՍ

Հինգշաբթի, 13 Փետրուար 2020-ի յետմիջօրէին, Բերիոյ Հայոց Թեմի բոլոր եկեղեցիներէն Ներս հանդիսա-



ւորապէս յիշատակուեցաւ քառասնօրեայ Մանուկ Յիսուսի տաճար ընծայման՝ Տեառնընդառաջի տօնը:

Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան Տեառնընդառաջի նախատօնակը հանդիսապետեց եւ օրուան պատգամը փոխանցեց Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, բարեպաշտներու հոծ բազմութեան ներկայութեամբ:

Երգուեցան Զրիստոսի տաճար ընծայումը նկարագրող շարականներ, որոնց ընթացքին Առաջնորդը եկեղեցւոյ մէջ շրջելով օրհնեց հաւատացեալներն ու երեխաները: Ապա տեղի ունեցաւ Անդաստանի արարողութիւն:

Սրբազան Հայրը փոխանցելով իր պատգամը, պարգաբանեց Տեառնընդառաջի եկեղեցական նշա-

ւորազան Հայրը աւելցնելով ըսաւ. «Այսօր այն օրն է, երբ Արարիչը իր բնակարանը եւ ժողովուրդին այցելեց եւ ինքզինք արժանի դարձուց բոլոր անոնց, որոնք հնազանդ էին Աստուծոյ կամքին եւ կը սպասէին Փրկիչի գալուստը, ինչպէս՝ Սիմէոն Ծերունին եւ Աննա Մարգարէուհին: Զրիստոսի տաճար ընծայման օրն էր, որ Աստուած մարգարէին ճամբով բացայայտեց, թէ Մարիամ Աստուածածինն ցաւակից ըլլալով մասնակից պիտի դառնայ փրկութեան ծրագրին»:

Տէր Մասիս Եպս. կարեւորելով ազգային-եկեղեցական մեր արժէքներու պահպանումը, հրահրեց հաւատացեալները, որ Զրիստոսի լոյսով համակեն իրենց սրտերն ու հոգիները:

Տեառնընդառաջի տօնին առիթով Սրբազան Հայրը երախտագիտական խօսք ուղղեց Սուրիական Հայրենիքին, որուն հողերուն վրայ հպարտօրէն կ'ապրինք, պահպանելով մեր ազգային-եկեղեցական տօները, հայկական արժէքներն ու




սրբութիւնները եւ իր ուրախութիւնը յայտնեց Սուրիոյ խորհրդարանին կողմէ Հայոց Ցեղասպանութեան բանաձեւի ընդունուման:

Այնուհետեւ, Սուրբ Խորանի կանթեղին լոյսով Առաջնորդ Սրբազան Հայրը լուսաւորեց հաւատացեալներուն մոմերը, ապա հանդիսա-



նակութիւնը յայտնելով, որ մարդկութիւնը Փրկիչը կը սպասէր եւ Աստուած իր փառքը բացայայտեց անոնց՝ տաճարին մէջ Յիսուս Մանուկի այցելութեամբ: Աւելի ուշ Զրիստոսի չարչարանքին, մահուան եւ յարութեան ընդմէջէն այդ փառքը անգամ մը եւս յայտնուեցաւ: Աստուած ընտրեց պարզ մարդիկը եւ անոնց միջոցով իրականացուց փրկութեան ծրագիրը, որուն օրինակելի տիպարն է Սուրբ Կոյս Մարիամը:



ԱԿՆԱՐԿ

ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՂԹԱՆԱԿ ՍՈՒՐԻՈՅ ՄԵՋ



Ս. Մահերտեան

Սուրիա եղաւ արաբական երկրորդ երկիրը, Լիբանանէն ետք, որուն խորհրդարանը ճանաչաւ Հայոց Ցեղասպանութիւնը, դատապարտեց զայն եւ անոր հանդէպ ժխտողականութիւնը եւ պատմութիւնը խեղաթիւրելու փորձերը: Ծանաչման բանաձեւը խորհրդարան ներկայացուած է Հայ-սուրիական բարեկամութեան ընկերակցութեան կողմէ եւ որդեգրուած միաձայնութեամբ:

Սա կարելի էր անվիճելի յաղթանակ մըն է հայութեան, Հայաստանի ու մեր Դատին ի խնդիր աշխատանք տանող բոլոր ծառայողներուն համար: Նոյնքան ուշագրաւ է, որ բանաձեւը կոչ կ'ունէր աշխարհի բոլոր խորհրդարաններուն, նաեւ՝ արաբական երկիրներուն, որպէսզի ճանչնան «մարդկութեան դէմ պատմական եւ ամենէն զագրելի մէկ ոճիրը եղող» այս ցեղասպանութիւնը, որուն զոհ զացած են նաեւ ասորիներ եւ այլ քրոստոնէայ փոքրամասնութիւններ, իբրեւ հետեւանք թուրք պետութեան «մաքրագործումի քաղաքականութեան»:

Սուրիոյ խորհրդարանի նախագահ Համմուտա Սապպաղ խարանող մանրամասնութիւններ աւելցուց, նշելով, որ Թուրքիոյ իշխանութիւնները այսօր ալ կը գործեն օսմանեան ոճրային տրամաբանութեամբ, կը փորձեն վերականգնել կայսերական դիտաւորութիւնները, իսկ անոնց մէկ արտայայտութիւնն են Սուրիոյ հողերէն ներս թրջակայ ուժերու արշաւանքները: Ան արտակցութիւն յայտնեց հայութեան ու ընդգծեց, որ «թոյլ պիտի չտանք օսմանեան հրէշին վերակենդանացման»:

ԱՐՁԱԳԱՆՈՒԹԵՐ ԵՒ...

Առաջին արձագանգը արձանագրեց Սուրիոյ խորհրդարանի անդամ եւ յիշեալ ընկերակցութեան նախագահ Նորա Արիսեան. ան նկատել տուաւ, որ այս որոշումը յստակ պատգամ է աշխարհին, որ նման ոճիրներ պէտք չէ կրկնուին որեւէ տարբերակով, ինչպէս տեղի կ'ունենայ այսօր, Սուրիոյ հիւսիսային շրջանին մէջ:



Հայաստանի Արտաքին գործոց նախարարութիւնը եւս ողջունեց որոշումը, նշելով, որ Սուրիոյ ժողովուրդը ատենին ականատես եղած է պատմական ոճիրին, հիւրընկալած է փրկուած հայորդիները, այնուհետեւ զարգացած է հայ-սուրիական բարեկամութիւնը: Երեւան գորակցութիւն արտայայտեց Սուրիոյ, որ ներկայիս նմանօրինակ աղետալի տագնապ մը կը դիմագրաւէ:

...ՄԵԿԱՎԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Սուրիոյ խորհրդարանին որոշումը արագ տարածում ունեցաւ աշխարհի մէջ, Եւրոպայէն մինչեւ Միջին Արեւելք եւ Ճափոն, արժանանալով տարաբնոյթ մեկնաբանութիւններու:

Ֆրանսական պատկերասփիւռի ֆրանս-24 կայանն ու Ճափոնի «Ճըփէն Թայմզ» թերթը գրեթէ նոյն բառերով ու հայեցողութեամբ ներկայացուցին լուրը: Զուեարկութեան արդիւնքը հաղորդելէ ետք, անոնք փութացին այս քայլը կապելու Սուրիոյ նորագոյն զարգացումներուն, յիշեցնելով, որ վերջին ամիսէն 10 օրերուն, Սուրիա-Թուրքիա լարուածութիւնը արագօրէն սրած է Իտլիպի շրջանին մէջ ծանօթ զարգացումներով ու թրջակայ սպանալիքներով, հպանցիկ ակնարկութիւն կատարեցին ահաբեկչական խմբաւորումներու դէմ սուրիական ուժերու արձանագրած յառաջնադասներուն ու Մոսկուա-Անքարա գիծին վրայ հակադրութեան դրսեւորման: Անոնք չմոռցան յիշատակել, որ Թուրքիա կը մերժէ ընդունիլ իրեն ուղղուած ամբաստանութիւնը: Ուշագրաւ էր նաեւ, որ յիշեալ աղբիւրները յիշեցուցին սուլթանական Թուրքիոյ մէջ 19-րդ դարու վերջերէն սկսեալ հաւաքական ջարդերը, որոնց զոհ զացած են մինչեւ 300.000 հայեր, իսկ 1915-ին ծայր առած Ցեղասպանութիւնը իսլամ է 1,5 միլիոն հայու կեանք: Վերջապէս, յիշատակում կատարուեցաւ նաեւ այն իրողութեան, որ Սուրիոյ Տեր Չօր քաղաքին մէջ կանգնած Ցեղասպանութեան յուշակոթողը 2014-ին ականահարուած էր ահաբեկչական խմբաւորումներու կողմէ:

Իսրայէլեան «Հաարեց» եւ «Թայմզ աֆ Իսրայէլ» թերթերը եւս այս զարգացումը դիտեցին Սուրիա-Թուրքիա հակադրութեան ծանրացման լոյսին տակ, յիշեցուցին իր ոճիրը չընդունելու Թուրքիոյ ծանօթ կեցուածքը, նաեւ, յիշեալ աղբիւրներուն պէս, ակնարկութիւն կատարեցին, որ Միացեալ Նահանգներու խորհրդարանը անցեալ տարեվերջին միացած է Ցեղասպանութիւնը ճանչողներուն, մինչդեռ նախագահ Թրամփ եւ իր վարչամեքենան կը մերժեն ընդունիլ այս կեցուածքը: Անոնք արձանագրեցին, որ ամերիկեան խորհրդարանի ճանաչումէն ետք, Իսրայէլի մէջ ալ ձայներ հնչած էին, որպէսզի խորհրդարանը ճանչնայ Հայկական Ցեղասպանութիւնը, սակայն ցարդ մնացած են անհետեւանք:

Արաբական «Ալ Մայատին» կայանը եղաւ բանաձեւին որդեգրման առաջին արձագանգողներէն, վերարտադրեց որոշումին ու խորհրդարանի նախագահին յայտարարութեան հիմնական բաժինները: Նմանապէս, կարճ հեռագրալուրով մը արձագանգեց չինական «Սինկուա»-ն:

Յառաջիկայ օրերուն, նման արձագանգներու օղակները կոր տարածք պիտի գտնեն վստահաբար, հայկական բեմին ու միջազգային բեմին վրայ: Այս բանաձեւը ահաւասիկ անգամ մը եւս լուսարձակի տակ կը բերէ մեր Դատը եւ արդար ու անսակարկելի պահանջատիրութիւնը: Յամենայնդէպս, պէտք չունինք սպասելու, թէ ի՞նչ պիտի ըլլայ Թուրքիոյ արձագանգը...:

ՄԻԱՅՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆԱՑՈՒՄ

Մեր՝ հայութեան դիտանկիւնէն, Սուրիոյ խորհրդարանին որդեգրած բանաձեւը կարելի էր ըլլալով հանդերձ, պէտք չէ մոռնալ, որ այս քայլը պարզապէս կը պաշտօնականացնէ հայութեան արդար դատին նկատմամբ Սուրիոյ դիրքորոշումը: Փաստօրէն, Սուրիա իրողապէս մեր դատը ճանաչած է այն օրերէն ի վեր, երբ հիւրընկալած է ցեղասպանութենէն վերապրողները (թէեւ այդ օրերուն անկախ չէր), անոնց ընծայած է իր բոլոր քաղաքացիներուն հաւասար իրաւունքներ: Իրողական ճանաչումի այլ փուլեր էին նոյնինքն Տեր Չօրի մէջ յուշակոթողին կառուցումը, Հայաստանի նախորդ նախագահին Տեր Չօր այցելութեան առիթով, 10 տարի առաջ, սուրիական իշխանութեան ծանօթ արտայայտութիւնները, Հայաստան այցելող սուրիացի ներկայացուցիչներու ճիծեռնակաբերոյ այցելութիւններ եւ տակաւին, ցեղասպանութեան 100-ամեակին առիթով արտայայտուած կեցուածքները: Այլ խօսքով, այս բանաձեւը պէտք չէ դիտել միայն Սուրիա-Թուրքիա հակադրութեան սաստկացման շրջագիծին մէջ (սաստկացումի նախընթաց բազմաթիւ փուլերու ականատես եղած ենք, սկսելով Զեսապի գրաւումէն ու ազատագրումէն՝ մինչեւ քիւրտերու դէմ թրջակայ միջամտութեան պատրուակող Սուրիա ներխուժումը՝ 2019-ի երկրորդ կիսուն, նաեւ՝ Հալէպի ու այլ քաղաքներու դէմ թրջակայ ուղղակի եւ անուղղակի ոտնձգութիւններու փուլերը):

Անկախ արաբական աշխարհը յուզող այժմու վերիվայրումներէն, եւ նկատի ունենալով Սուրիոյ պատմական դերը՝ արաբական աշխարհին մէջ, մասնաւորաբար անցեալ դարու կեսերէն սկսեալ, այս բանաձեւին որդեգրումը պէտք է դիտել նաեւ ամբողջ լայն օղակի մէջ. սա նաեւ կը շեշտէ ո՛չ միայն Սուրիոյ հողերուն վրայ հայութեան ներկայութեան կարեւորութիւնը (հոգ չէ թէ ծանօթ դէպքերուն հետեւանքով նօսրացած), այլեւ հայութեան այն սպասումը, որ արաբական այլ երկիրներ եւս՝ Յորդանան, Եգիպտոս, Իրաք, Պաղեստին, Ճոնքի եւ Մաղրեպի երկիրներ ընդառաջեն Սուրիոյ խորհրդարանի կոչին, որովհետեւ, ինչ որ ալ ըլլան նորածիլ «քաղաքական խմբաւորումներու» տեսութիւնները, Թուրքիա արաբական աշխարհին կողմէ չի կրնար ընկալուիլ իբրեւ վստահելի բարեկամ-գործակից, նախ՝ որովհետեւ արաբներն ալ ճաշակած են թրջակայ-օսմանեան դաժանութիւնները, յետոյ՝ այսօր ալ կը կրեն թրջակայ ներշնչումով գործող յելուգակներուն ոճրային արարքները իրենց հողերուն վրայ: Իսկական բարեկամութիւնը եւ դրական գործակցութիւնը կրնան հիմնուիլ միայն պատմական սխալներու սրբագրումով ու արդարութեան վրայ: Փաստօրէն, հայութեան դէմ թրջակայ ոճիրները ո՛չ միայն անմարդկային արարքներ էին քրիստոնէայ այս կամ այն ժողովուրդին դէմ, այլ նաեւ նոյնինքն արաբ-իսլամ ժողովուրդներուն նկատմամբ, առանց մոռնալու քիւրտերը, իսկ ամբողջ ուշ՝ յոյներն ու կիպրացիները: Պատմութիւնը այս իրականութիւնը վկայող հսկայական թղթածրարներ ունի: Հայաստանի ու Հայ Դատի ծառայողներուն համար, արաբական աշխարհին ուղղութեամբ աշխատանքի հորիզոնները յստակ են, եւ այդ արխիւները բաւարար յենարան կ'ապահովեն:

ՈՂՋՈՒՆԵԼԷ ԱՆԴԻՆ

Հայութեան ու աշխարհը չեն կրնար չողջունել Սուրիոյ խորհրդարանին բանաձեւը. նման ոճիրներ պէտք է դատապարտուին, անոնց պատմական ճշմարտութիւնը եղծելու կամ դրժելու արտայայտութիւնները նոյնքան դատապարտելի են. անոնք ոճիր են համայն մարդկութեան դէմ, իսկ անոնց կրկնութիւնը կանխարգիլելու համար, պէտք է խօսքէն գործի անցնիլ Թուրքիոյ ու անոր նման բոլոր պետութիւններուն դէմ:

Ոճիրներու արգելակումը պէտք է սկսիլ ՊԵՏԱԿԱՆ ՈՃԻՐՆԵՐՈՒ ԴԱՂՔԵՆՈՒՄՈՎ եւ յանցաւորներուն դէմ պատժամիջոցներու որդեգրումով, նիւթական ու բարոյական հատուցումով:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հանգուցեալ ՃՈՐՃ ԱՃԷՄԵԱՆ



Հանգուցեալի մահուան Ա. տարեկիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 23 Փետրուար 2020-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ - Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին հանգուցեալի բնակարանէն ներս:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՆՐԱՔՈՒԷՈՎ ԳՈՐԾԵ ԱՐՁԱԿԵԼՈՒ

Կարո Արմենյան

Սահմանադրական իրաւունքի բնագաւառին մէջ, հիմնական *Նորմ* է երեք տարանջատ իշխանութիւններու փոխ-յարաբերութեան կայունութեան պահպանումը: Եւ այդ կայունութեան երաշխաւորը Սահմանադրական Դատարանն է, որուն որոշումները անվերաքննելի են:

Ժողովրդավարական համակարգը պարտադիր կը դարձնէ, որ երկրի օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւնները գործեն իրենց սահմանադրական իրաւաստութիւններու նախատեսուած սահմաններուն մէջ: Անոնք հարկադրուած են յարգելու երրորդ իշխանութեան, այսինքն դատակա՞ն իշխանութեան անկախութիւնը, եւ հետեւաբար՝ պարտաւորուած են ընդունելու դատական համակարգի տնօրինումները առանց դոյզն իսկ առարկութեան: Ո՛չ վարչապետին, ո՛չ կառավարութեան միւս անդամներուն, ո՛չ ազգային ժողովի նախագահին եւ ոչ ազգային ժողովի պատգամաւորներէն որեւէ մէկուն արտօնուած է քաղաքական դաշտը խանգարելու ՀՀ դատական համակարգի որոշումներուն եւ դատաւորներու անձանց դէմ: Նմանօրինակ որեւէ քայլ քրեական ոստիկանութիւն է ՀՀ սահմանադրութեան դէմ եւ պետք է ըլլայ խստօրէն պատժելի:



Իսկ օրէնսդիր եւ գործադիր իշխանութեանց որոշումներու եւ պահուածքի (conduct) սահմանադրականութիւնը հաստատող միակ իրաւաստատեանը ՀՀ Սահմանադրական Դատարանն է, որուն վրայ որեւէ գերիշխանութիւն չունին եւ չեն կրնար ունենալ օրէնսդիր եւ գործադիր իշխանութեանց իշխանաւորները: Եթէ դատական համակարգի գործիչներէն որեւէ մէկը մեղաւոր է փտախտով եւ գեղծարարութեամբ (ինչպէս մեծահագագ կը պնդեն ներկայ իշխանութեան համակիրներն ու շատագովները), այդ ամբաստանութիւնը պետք է մանրամասնօրէն հիմնաւորուի պետութեան համապատասխան ծառայութիւններուն կողմէ եւ հարցը լուծում գտնէ ՀՀ Սահմանադրութեան նախատեսուած գործընթացներով միայն: Ոչ ոք իրաւունք ունի այդ գործընթացները աղմկարարութեամբ նախապաշարելու: Դարձեալ՝ նման պարագաներուն ըսելիք չունին օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւնները եւ առաջին հերթին՝ պր. վարչապետը՝ ի՞նչ: բայց ունին ընելիք: Անոնք ամէն անհրաժեշտ քայլ պիտի առնեն, որպէսզի դատական գործընթացը պահուի խաղաղ եւ անխաթար մթնոլորտի մէջ եւ հեռու՝ որեւէ ամբոխավարութենէ:

Այս բոլորէն կը հետեւի, որ ՀՀ Ազգային Ժողովի որոշումը ՀՀ Սահմանադրական Դատարանի դատաւորական կազմը հանրաքուէով լուծարելու յարիր չէ ՀՀ Սահմանադրութեան սկզբունքներու ետեւ: Ան յստակօրէն կը ցոյցնէ քաղաքական մեծամասնութեան ներքաւարը եւ երկրի սահմանադրական գործընթացը կը քաղաքականացնէ: Առաւել եւս անընդունելի՝ որ այդ քաղաքականացումը տեղի կ'ունենայ մեծամասնութեան ուժի չարաշահումով եւ առանց համազգային խորհրդակցութեան: Որոշումը նաեւ կը խախտէ հիմնական օրինականութիւն մը: Եթէ «մեղքեր» կան գործուած, այդ մեղքերուն հետ առընչուող մեղադրանքները -յետին մանրամասնութեամբ- պետք է ուղղուած ըլլան իւրաքանչիւր ԱՆՐԱՏ դատաւորի, մինչդեռ որոշումը «կը լուայ բոլորն ալ Նոյն ջուրով»... Եւ մանաւանդ ան ոտնակոխ կ'ընէ իւրաքանչիւր դատաւորի անմեղութեան կանխավարկածը: Դատաւորական այս կազմի դատաւորներէն ամէն մէկը -ներառեալ՝ Սահմանադրական Դատարանի ներկայ Նախագահը- ԱՆՄԵՂ է մինչեւ որ ՀՀ Սահմանադրութեան նախատեսուած գործընթացով ապացուցուի անոնցմէ ամէն մէկուն կարծեցեալ մեղքը: Ո՞րք է Մարդու Իրաւունքներու Պաշտպանը: Եւ ո՞րք կը մնայ Մեծարգոյ պր. վարչապետին հաւաստացումը, թէ իր իշխանութեան օրով մարդու իրաւունքները տառացիօրէն պիտի յարգուին...

Ես տակաւին ըստ ետեւեան չխօսեցայ ՀՀ Սահմանադրական Դատարանին դէմ շղթայագերծուած այս խաչակրութեան մասին: Այդ մէկը՝ ուրիշ առիթով: Մէկ բան կ'ուզեմ յանձնել բոլորին ուշադրութեան: Պատկերացուցէ՛ք, թէ ամէն նոր իշխանութիւն, որ այս կամ այն ձեւով խորհրդարանական մեծամասնութիւն կը ձեւաւորէ եւ կը յայտնուի պետութեան ղեկավար դիրքերուն վրայ, ինքզինքին իրաւունքը տայ նոր հանրաքուէի միջոցով Սահմանադրական Դատարան փոխելու... Այսինքն՝ փոխելու այն իսկ մարմինը, որ յանուն հանրութեան պարտականութիւնը ունի իր վրայ հսկելու... Խնդրեմ ըսէք, թէ իսկապէս ի՞նչ կը ստացուի այս ընթացքով: Ըսէք, թէ ինչպիսի՞ ծաղրանկարի կը վերածենք մեր երկրի տնօրէն օրէնքը, օրէնքներու օրէնքը, մեր ազգային միասնականութիւնը օրինազրոյ միակ փաստաթուղթը, մեր հաւաքական ինքնութեան վկան: Վերջ տուէք, տիկնայք եւ պարոնայք: Վերջ տուէք այս երթուղարձին: Եւ կամ ըսէք հանրութեան, որ ի վիճակի չէք այս երկիրը իր սահմանադրութեամբ կառավարելու:

Փետրուար 13, 2020

Աշակերտական Անկիւն

ՎԱՐԴԱՆԱՆՑ

Ամէն տարի Փետրուար ամսուան ընթացքին կը յիշատակենք Վարդանանց տօնը եկեղեցիէն եւ դպրոցէն ներս:

Փոքր տարիքէս կը մասնակցէի այս տօնակատարութիւններուն, ուրախութեամբ կ'արտասանէի եւ կ'երգէի, առանց գիտնալու տօնին իմաստը:

Բայց երբ մեծցայ եւ խելահաս դարձայ, սկսայ հպարտութեամբ մասնակցիլ Վարդանանցի տօնակատարութեան, որովհետեւ քաջ Վարդանը կռուեցաւ պարսիկներուն դէմ պահպանելու համար մեր հաւատքն ու հայրենիքը եւ իր նահատակութեամբ այսօր մենք կը շարունակենք ապրիլ որպէս հայ: Ան իր արիւնը թափեց հայ ազգը քրիստոնեայ պահելու համար:

Այսօր մենք, իբր զօրավար Վարդանի թոռներ, պետք է պահենք մեր հաւատքը եւ ազգութիւնը, լաւ սորվիք մեր մայրենի լեզուն եւ տեր կանգնիք մեր եկեղեցիներուն:



Գարլա Աթիկեան
Ը. կարգ

Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ծնմարան

Ամէն տարի կը յիշատակենք Վարդանանց տօնը: Այս տօնը մեզի համար շատ կարեւոր է, մենք կը յարգենք քաջ հերոսին՝ Վարդան Մամիկոնեանին եւ իր զինուորներուն յիշատակը:

Հայաստան գրեթէ բոլոր երկիրներուն համար ցորենի հատիկի պէս էր, այդ պատճառով պարսիկներուն թագաւորը՝ Յազկերտ, կ'ուզէր հայ ժողովուրդը կրակապաշտ դարձնել, բայց Վարդան մերժեց կրակապաշտ դառնալ եւ խոստացաւ իր զինուորներուն հետ չուրանալ Զրիստոսը եւ զոհուիլ փրկելու համար Հայաստանը եւ հայ ժողովուրդը:



Պատերազմը տեղի ունեցաւ 451 թուին, Աւարայրի դաշտին վրայ, Տղմուտ գետի ափին:

Պարսկական իսկայբանակը կազմուած էր 300.000 -է աւելի զինուորներով, իսկ հայկական բանակը՝ 60.000 զինուորներով:

Պարսիկները մեծաթիւ զոհեր տալէ ետք կը քաշուին, դժբախտաբար պատերազմը կ'աւարտի Վարդանի նահատակութեամբ, բայց Աստուծոյ կամքով հայկական բանակը կը յաղթէ:

«**Չարկիր զարկուար, ինկար քաջ քաջ Պարսիկ սփռած ի ձախ ու աջ**»:

Վարդան եւ իր զինուորները զոհուեցան մեզի համար ու մենք զինք կոչեցինք «Քաջ Վարդան»:

Լեա Պետրոսեան
Ը. կարգ

Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ծնմարան

Վարդան Մամիկոնեան սպարապետը եթէ մեր մէջ ըլլար, ես անոր կը հարցնէի.

-Ինչո՞ւ որոշեցիք մերժել կրօնափոխութեան առաջարկը:

Վարդան պիտի պատասխանէր.

-Մեր ազգասիրութենէն եւ կրօնասիրութենէն մղուած մերժեցիքը առաջարկը:

-Հայրես որքա՞ն զօրք ունէինք եւ քանի նահատակ ունեցանք:

-Մենք 60.000 զօրքով դէմ դրինք մեծաթիւ պարսկական զօրքին եւ ունեցանք 1036 նահատակ:

-Վերջին գիշեր Դեռնոյ երեք քարոզ մը տուաւ, իսկ դուք ճառ մը խօսեցայ, ինչո՞ւ համար:

-Մեր զինուորները քաջալերելու եւ ոգելորելու համար:

-Շատ շնորհակալ եմ, որ պաշտպանեցիք քրիստոնէութիւնը եւ հայ ազգը: Ես ալ իմ կարգին կը խոստանամ Նոյնը ընել:

Լոռի Սանճիկեան
Ը. կարգ

Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ծնմարան



Հին ժամանակներէն սկսեալ ազգեր ուզած են փորձութեան ենթարկել հայ ժողովուրդին հաւատքը: Ե. դարուն պարսիկները փորձած են հայ ժողովուրդը ձուլել իրենց մէջ: Անոնք ուզած են, որ մեր ժողովուրդը ուրանայ իր ճշմարիտ հաւատքը եւ յարի իրենց հեթանոսական կրօնքին: Ուզած են նաեւ, որ մեր ազգը իր Սուրբ մշակոյթը կորսնցնելով ընդունի օտարն ու օտարացնողը: Բագրատունեաց թագաւորութեան շրջանին, յոյները ուզեցին, որ մեր ժողովուրդը իր ուղղափառ հաւատքը մոռնայ եւ լատինադասան դառնայ: Սակայն, ո՛չ պարսիկները եւ ո՛չ ալ յոյները

ՎԱՐԴԱՆԱՇՈՒՆԶ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ



Շակոբ Կիս. Սրկ. Գաւտեճեան

«ամէն մէկ պարտութիւն յաղթանակի նոր դուռ մը կը բանայ»: Այո՛, ճիշդ է որ հայերը ինկան այդ ճակատամարտին, սակայն անոնք Քրիստոսի խաչին յենելով կրկին ուրիշ կանգնեցան, անոնք շարունակեցին հաստատ մնալ իրենց հաւատքին մէջ, շինեցին եկեղեցիներ, վանքեր ու մատուռներ, ժողովուրդին տուին մատղաշ ու ինքնագոհ կղեր

րէն հագուեցաւ հաւատքի պատմունճանը: Իր վերքերը լուաց Քրիստոսի անարատ արիւնով: Երբեք իր կապը չկտրեց իր «Յոգատար Աստուծոյ» հետ եւ ուր որ ալ գնաց այդտեղ ծաղկեցուց ու զարդարեց իր Արարիչին նուիրուած տուն մը կանգնեցնելով: Հայը գիշեր ու ցերեկ այցելեց այդ երկնային ու երանելի տունը, Բարձրեալին հովանին խնդրելու համար:

ամբողջական նուիրումով կը պաշտպանեն զայն: Սակայն, միայն Վարդանեան շունչով չէ որ անոնք նուիրուած են իրենց հայրենիքին, անոնք նաեւ ստացած են ազգային-հոգեւոր դաստիարակութիւն, զոր Հայ եկեղեցին կը պարգեւէ անոնց:

Ուրեմն իբրեւ Քաջ Վարդանի թոռներ, մնաց հաստատ մեր հաւատքին մէջ եւ չմոռնանք մեր Նախահայրերուն թափած ջանքը այս իմաստով: Երբեք չկորսնցնենք Վարդանեան շունչը, որովհետեւ եթէ կըտրենք զայն, կտրած կ'ըլլանք հայ ժողովուրդի սրտին երանկները եւ պատճառ կը դառնանք հայ ժողովուրդին մահուան: Ամէն մէկ քայլափոխի զգանք Աստուծոյ հովանին, մեր սրբութրուն խորերէն խօսինք Անոր հետ եւ չդադրինք Անոր հետ կապի մէջ մնալէ: Միշտ Քրիստոսի ձեռքը ամուր բռնենք եւ երբեք չձգենք զայն, որովհետեւ ինչպէս որ Ան երկու հազար տարի առաջ մեզի փրկութիւն շնորհեց, նոյնպէս ալ մեզի փրկութիւն պիտի պարգեւէ այսօր, վաղը եւ յաւիտեան: Սուրբ Յոգիով Աստուծմէն խնդրենք, որ միշտ մխիթարէ մեզ: Եւ միշտ յիշենք, որ մենք լքուած կամ խաւարի մէջ չենք, որովհետեւ մեր Տէրն ու Փրկիչը Յիսուս Քրիստոս կ'ընեն: «Ես եմ աշխարհի լոյսը: Ով որ ինձի կը հետեւի՝ խաւարի մէջ պիտի չբայլէ, այլ պիտի ունենայ այն լոյսը որ կեանքին կ'առաջնորդէ» (Յհ. 8. 12):

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանդ Պրոֆ. Կիսեան



կրցան հայը խզել իր ճմարիտ կրօնքէն: Այս հաւատքի քննութիւններով մեր ժողովուրդը աւելի զօրացուց իր հաւատքը եւ մօտեցաւ իր Արարիչին: Մեր ազգը միշտ իր հաւատքը կրցած է պաշտպանել, որովհետեւ ան երբեք իր յոյսը չէ կտրած Քրիստոսի հանդէպ:

Մարդիկ կը կարծեն, թէ հայ ժողովուրդը անտեր է, սակայն մենք ունինք Հայր Աստուածը, որ միշտ մեր քայլերուն կը հետեւի, մենք ունինք Որդի Աստուածը, որ միշտ մեր ձեռքէն կը բռնէ եւ բոլոր խոչընդոտներուն վրայէն կ'անցնէ մեզ, մենք ունինք Սուրբ Հոգի Աստուածը, որ միշտ կը մխիթարէ մեզ: Մենք ունինք Սուրբ Կոյս Մարիամը, որ անդադար կը բարեխօսէ մեզի համար եւ վերջապէս մենք ունինք այն մարտիրոսներու բազմութիւնը, որ միշտ մեզի հետ է եւ կը բարեխօսէ մեզաւորներուն համար: Մենք ունինք նաեւ ազգին համար մարտունակ կռուողներ: Ուրեմն, հայ ժողովուրդը ամէն ինչ ունի:

Այս շաբաթ յիշատակն է այն անմահ ու նուիրեալ սուրբերուն, որոնք մեր ազգի հաւատքին յաւերժական վահանները դարձան: 451-ին պարսիկները կարծեցին, թէ հայ ժողովուրդը պիտի ուրանայ իր հաւատքը երբ պատերազմի իրենց դէմ: Սակայն անոնք հաւանաբար մոռցած էին, որ իրենց առջեւ կը գտնուէին խիզախ ու հսկայ Վարդաններ, որոնք պատրաստ էին ամէն ջանք ու զոհողութիւն ի գործ դնելու մեր ազգին փրկութեան համար: Ե. դարուն էր, որ պարսիկները իրենց բանակով յարձակեցան հայ ազգին պաշտպաններուն վրայ: Պարսիկները յաղթեցին այդ ճակատամարտին, սակայն հայերը չպարտուեցան, որովհետեւ մեր ժողովուրդը միշտ հաւատացած է, որ

ուականներ, որոնք իրենց քարոզչութեամբ մեր ժողովուրդին կապը ամուր պահեցին իր Արարիչին հետ: Հայ ժողովուրդը միշտ իր մտքին մէջ ունեցաւ Աստուածաշունչէն քաղուած այն քաղցր ու անուշ խօսքը, որ կ'ընէ. «Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կրնայ մեզի հակառակ ըլլալ» (Հռ. 8. 31): Անոնք չպարտուեցան նաեւ, որովհետեւ մեր զոհերուն տաք արիւնով այդ պարտութիւնը ջնջուեցաւ մեր ժողովուրդին մտքէն եւ անոր տեղը տիրեց յարատեւ պայքարի սուրբ գաղափարը, որ մինչեւ այսօր գոյութիւն ունի հայու մտքին ու հոգիին մէջ:

Մեր ժողովուրդը անբնական կերպով կապուած է Աստուծոյ հետ, որովհետեւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցին պարզ հոգեւոր կեդրոն մը չէ, այլ ազգային եկեղեցի է: Հայոց պատմութեան բոլոր փուլերուն Հայ եկեղեցին եղած է իր ժողովուրդին հետ: Այս խօսքին մեծագոյն փաստը կը գտնենք հայոց պատմութեան այն էջերուն մէջ, ուր կը պատմուի, թէ ինչպէս Վարդանանց պատերազմի ընթացքին Աւարայրի դաշտին վրայ Ղեւոնդ Երեց իր մէկ ձեռքին ունէր Աստուածաշունչը, իսկ միւս ձեռքին՝ սուրը:

Եթէ Հայ ժողովուրդը Վարդանանց պատերազմը հաւատքի համար մղուած ձախող պատերազմ մը նկատած ըլլար, մեծ Եղեռնէն ետք, իր մէջ Վարդանեան սուրբերուն շունչը պիտի չունենար: Վարդանեան հաւատքի շունչով էր, որ մեր ժողովուրդը տոկաց 1915-ի ահաւոր Եղեռնին: Ան յաղթեց մահուան եւ Քրիստոսի ապաւինելով կարողացաւ դուրս ելլել անապատի աւազներէն: Ան Քրիստոսի ձեռքէն բռնած կարողացաւ ոտքի ելլել աւերակներուն տակէն, իր հագած ցընցոտիները հանեց եւ անոր փոխա-

Համագայինի Աւրիոյ Շրջ. Վարչութեան «Լեւոն Շանթ» Թատր. Միաւորի Վարչութիւնը կը կազմակերպէ:

ԴԻՄԱԿԱՌԱՆԴԷՍ

COSTUME PARTY

Շաբաթ, 29 Փետրուար 2020-ին
ԵՐԵՎԱՆԻ ՇԻՄՈՒ 8:00-ԷՆ ՄԿՄԵՆՆԻ
«Հ.Ս.Ը.Ս.» ՊԱՐՏԵՂԵՆ ՆԵՐՍԻ:

ՏՈՒՄԵՐԸ ԵՊԿՆՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ 0950 014 487
ՊԻՎԵԼ ՀԵՏԵՆԵՎ ՀԵՆՆԻՍՈՍԱՆՍՆԱՐԻՆԵՐՈՒՆ 0944 763 089

ՆԱԽԱՆՏՐԵԼԻ ԵՆԵՐԿԱՅ ԳՏԱՌԻԼ (ՄՊՏՈՒՄՏ)

ԾԱՌԱՅԱՍԵՐ ԸՆԿԵՐ ՍԱՐԳԻՍ ՄԱՐՈՒԹԵԱՆԸ

Դամբանական՝ արտասանուած ընկեր Սարգիս Մարութեանի մահուան առիթով

Կազմակերպական թե՛ ազգային հարցերու ու աշխատանքներու մէջ ծայր աստիճան բծախնդրութիւն ցուցաբերող, ամենայնպէս մանրամասնութիւններով հետաքրքրուող, իր անձնական կեանքին նման, եւ դեռ աւելին՝ նշեալ բնագաւառներուն վերաբերող ծրագիրներուն լրջութեամբ հետեւող, իրեն վստահուած աշխատանքները լաւագոյնս կատարող ընկ. Սարգիս Մարութեանին հրաժեշտ կու տանք այսօր:



Ընկ. Մարութեան չէր հանդուրժէր սխալը, չէր լռէր նկատած թերութիւններուն ի տես, անհոգութիւնն ու անտարբերութիւնը ընդունուած վերաբերմունք չէին ընկ. Մարութեանին համար: Ո՞վ կը համարձակէր անոր ներկայութեան թափափած վարմունք դրսեւորել կազմակերպական աշխատանքներուն նկատմամբ:

Ընկ. Սարգիսը յատկապէս տնտեսական բնագաւառին մէջ հմտացած էր: Անգիր գիտեր իրեն յանձնուած տնտեսական, ընկ. Սարգիսը յատկապէս տնտեսական բնագաւառին մէջ հմտացած էր: Անգիր գիտեր իրեն յանձնուած տնտեսական,

հաշուական արխիւներուն բովանդակութիւնը, կը գններ, կը քննէր, կը բացատրէր, կը լուսաբանէր, կը փարատէր անյստակութիւնները եւ սեւով ճերմակի վրայ գրուած պայծառութեամբ կը ներկայացնէր զեկոյցները:

Ընկ. Մարութեան մեծ ներդրում ունեցաւ 1988-ի Սպիտակի եւ յարակից շրջաններու երկրաշարժին՝ Հալեպի մէջ ծաւալուած օժանդակութեան աշխատանքներուն սատարելով: Ամիսներով գիշեր-ցերեկ աշխատեցաւ օգտակար դառնալու համար աղետեալ հայրենիքին:

Ընկ. Մարութեան յատուկ սեր կը տածէր Ազգային Զարեմ Եփփե Ծեմարանի հանդէպ, ուր որպէս խնամակալ աշխատած էր շուրջ 15 տարի: Ծեմարանը ներկայութիւն էր իր առօրեային մէջ, կը մտահոգուէր դպրո-

ցով, աշակերտով, ուսուցիչով ու վարչականով: Ծեմարանի առնչուած որեւէ յաղթանակ, նուաճում, յաջողութիւն կարծես իր անձնական յաղթանակն ըլլար, այդքան կը ներշնչուէր, այդքան կ'ուրախանար:

2018-ին, Ծեմարանի 70 ամեակին առթիւ, ընկ. Մարութեան պարգեւատրուեցաւ որպէս վաստակաշատ խնամակալ:

Ընկ. Սարգիս Մարութեան երկար տարիներ ծառայեց Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան, երկար տարիներ ըլլալով Համազգայինի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ: Համազգայինը իր ընտանիքն էր, կը տագնապէր անոր հարցերով, կը նպաստէր մշակութային գործունեութեան, հայրենի հիւրերը կը դիմաւորէր սիրով ու խանդավառութեամբ, կը ջանար որակաւոր ձեռնարկներ հրամցնել ժողովուրդին ու ծրագրել ամենէն աննշան մանրամասնութիւններն անգամ:

Ընկեր Մարութեան ծառայեց նաեւ Բերիոյ Հայոց Թեմի Տնտեսական Խորհուրդին մէջ: Օրական ներկայութիւն դառնալով Ազգ. Առաջնորդարանէն ներս:

Ան մեծապէս կը հետաքրքրուէր երիտասարդութեամբ, կը խրախուսէր, կ'ոգեւորէր զանոնք, որպէսզի իրենց ստանձնած աշխատանքները կատարեն նոյն այն բծախնդրութեամբ, որ ինք կը կատարէր:

Ընկ. Սարգիսը սիրապէս եւ բարոյապէս զօրավիգ էր իր պատկանած կազմակերպութեան հետապնդած նպատակներուն: Տարիներ առաջ ան կազմակերպութեան նուիրեց իր ունեցուածքը, որովհետեւ կազմակերպութիւնը իր մեծ ընտանիքն էր, իր ամբողջ շրջանակը:

Այսօր հրաժեշտ կու տանք ընկ. Մարութեանին, հրաժեշտ կու տանք նուիրական աշխատանքով յատկանշուած ընկերոջ, որուն յիշատակը պիտի շարունակէ անընդհատ յուշել մեզ իր պատմած դէպքերը, կատարած մատնանշումները, նկատողութիւնները, թելադրանքները եւ յանձնարարականները թե՛ այնպէս ինչպէս անձնական կեանքին մէջ, նոյնպէս կազմակերպական եւ ազգային կեանքէն ներս անպայմանօրէն պետք է պարկեշտօրէն գործենք, լրջութեամբ մօտենանք հարցերուն եւ նուիրումով աշխատինք:

Յողը թեթեւ գայ վրադ ու յիշատակդ անմար մնայ, ընկեր Սարգիս: **Գաղափարակից ընկերներ**

ԱՐՓԻԱՐ ԹՐԹՈՒԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

«Աշխարհի մէջ հիւրի նման, ինչպէս եկանք, էնպէս կ'երթանք»: Այս էր կրկնուող խօսքը, պապո՛ւկ: Ծիչդ է որ դուն հեռացար մեզմէ 40 օր առաջ, բայց հեռացար միայն մարմնապէս, քու հոգիդ մեզի հետ է եւ միշտ պիտի մնայ: Աջ կը դառնանք կը տեսնենք քու ցանած սերմերդ, զորս կ'իսատ ձգեցիր, գինիի տակարը չէ պարպուած շիշերու մէջ: Ձախ կը դառնանք ու կը տեսնենք բանջարեղէններու սերմերը, որոնք դարակին մէջ են, չհասար տնկելու...:



Շատ աշխատասեր էիր, կեանքը սիրող, լաւատես եւ գուրգուրալից:

Կը հաւատայիր, որ մեր երկիրը պիտի լաւանայ եւ ահա, երանի՛ մեզի հետ ըլլայիր, պապո՛ւկ, ու միասնաբար վայելիք մեր բանակին տարած յաղթանակները: Վստահ եմ, որ շա՛տ պիտի ուրախանայիր: Միշտ յոյսով էիր եւ կ'ըսէիր, որ Թրթռեան հաստատութիւնը (զոր հաստատած էիք դուն եւ Կարպիս պապուկը) դարձեալ ոտքի պիտի հանէ՛ք եւ կը ձեռնարկէք, ու ձեր գաւակները պիտի վերադառնան, գործարանը իրենց կը սպասէ, որպէսզի անոնք նոր ոճով շարունակեն ձեր պայպենական գործը:

Այո՛, շատ նշանաւոր էր քու հրամայական ոճը, բծախնդրութիւնը: Երբ գործ մը յանձնէիր մեզի, կ'ուզէիր, որ քու ոճովը աշխատինք:

Արփիար՝ Պապուկ, քու գլխաւոր իւրայատկութիւնդ Զեսապի պատկանելիութիւնդ էր: Հոգեպէս կապուած էիր ծննդավայր Զեսապին, անոր չքնաղ բնութեան, օդին ու ջուրին, քարին... թուփին, ուզեցիր միշտ շէն ու կանգուն պահել գիւղական աւանդներդ, տուն-տեղ կառուցեցիր, պարտեզներ մշակեցիր եւ նուիրուեցար գիւղի վերելքին: Հանգստեան կոչուելէդ ետք, հոն մնայուն բնակութեան հիմեր դրիր: Գիւղական պատկանելիութիւնը եւ պայպենական ստացուածքներու պահպանումը աւանդ ձգեցիր զաւակներուդ ու թոռներուդ:

Պապո՛ւկ, հանգիստ ննջէ՛, բոլոր զաւակներուդ եւ թոռներուդ անունով խօսք կու տանք, որ պիտի շարունակենք մեր կեանքը, ինչպէս որ դուն կը փափաքէիր, պիտի մնանք համերաշխ եւ սիրով, այնպէս ինչպէս դաստիարակեցիր մեզ:

Յիշատակդ անթառամ պիտի մնայ, Արփիար Պապո՛ւկ: **Լէա Թրթռեան**

ՍԱՊՊԱԸ «ՀԱՅՈՋ...»

Սկիզբ՝ էջ 1

Կը դնէ թրջական բանակին յարձակումներուն եւ օսմանեան բարբարոսութիւններուն, արձանագրելով պատմական յաղթանակը:

Քուեարկուած բանաձեւին մէջ կը յիշուէր.

«Սուրիական Արաբական Հանրապետութեան խորհրդարանը, Հինգշաբթի, 13 Փետրուար 2020-ին իր գումարած նիստին ընթացքին կը ճանչնայ եւ կը դատապարտէ 20-րդ դարու սկիզբը Օսմանեան Կայսրութեան ծրագրած եւ իրագործած Հայոց Ցեղասպանութիւնը:

Խորհրդարանը կը դատապարտէ ցեղասպանութեան ուրացման եւ պատմութեան նենգափոխման իւրաքանչիւր փորձ եւ կը հաստատէ, որ Հայոց Ցեղասպանութիւնը մարդկութեան դէմ ի գործ դրուած ամենէն դաժան ոճիրն է:

Խորհրդարանը կը բաժնեկցի հայ բարեկամ ժողովուրդին ցաւը եւ կը հաստատէ, որ Սուրիոյ ժողովուրդին բաղադրիչներուն մաս կազմող հայեր, ասորիներ, սուրիականներ եւ այլ ազգեր այդ տարիներուն զոհը դարձան օսմանցի թուրքերուն կողմէ ծրագրուած եւ իրագործուած ցեղասպանութեան:

Խորհրդարանը կոչ կ'ուղղէ աշխարհի խորհրդարաններուն եւ միջազգային ընտանիքին ճանչնալու եւ դատապարտելու Հայոց Ցեղասպանութիւնը:

Իր կարգին Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան, Սուրիական-Հայաստանեան Խորհրդարանական

Բարեկամութեան Յանձնաժողովի նախագահ դուր. Նորա Արիսեան յայտնեց, որ Սուրիոյ խորհրդարանին կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը շատ մեծ նշանակութիւն ունի, նկատի առնելով, որ Սուրիոյ ժողովուրդը ընդգրկեց ցեղասպանութենէն ճողոպրած հայերը եւ զանոնք Օսմանեան Կայսրութեան ոճիրներէն փրկեց: Արիսեան աւելցնելով ըսաւ, որ Թուրքիա մեկնելով իր բարբարոսական քաղաքականութենէն միջեւ օրս կը շարունակէ ոճիրներ գործել եւ ահաբեկչութեան պաշտպան հանդիսանալ:

Արիսեան շնորհակալական խօսք ուղղեց Սուրիոյ նախագահ Պաշշարաօ Ասատին, ինչպէս նաեւ Սուրիոյ խորհրդարանի նախագահ Համմուտա Սապպադին եւ խորհրդարանի բոլոր անդամներուն՝ հայ ժողովուրդին հանդէպ իրենց ցուցաբերած դրական կեցուածքին համար:

Երեսփոխաններէն ոմանք այս առիթով խօսք առին՝ յայտնելով, որ Օսմանեան Կայսրութեան իրագործած Հայոց Ցեղասպանութիւնը ներկայիս Սուրիոյ մէջ կը կրկնուի Թուրքիոյ նախագահին հրահրումով: Ան պաշտպան կը հանդիսանայ զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն եւ սուրիական հողեր կը բռնագրաւէ:

Երեսփոխանները պահանջեցին նաեւ հայ ժողովուրդին նիւթական եւ բարոյական փոխհատուցում կատարել, իսկ Սուրիոյ տարածքին օսմանեան անուններ կողմ թաղամասերն ու հնագիտական վայրերը Սուրիոյ նահատակներուն անունով վերանուանել:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 333)

Մ Տ Ա Մ Ա Ր Զ Ա Ն Ք



Պատրաստեց Մարինա Զիլբերշեան-Պողիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- 1- Կոստան Զարեանի բանաստեղծական երկերեն. «.....»
- Հարսը»: Կողմ:
- 2- Ահաւասիկ: 1020: Հայ նահապետ:
- 3- Հաց: Կրկին:
- 4- Չէնքով մարդ որսացող: Տարի:
- 5- Շալկել: Արական կոչական բառ:
- 6- Հակառակ՝ անձնական դերանուն: Իրարայաջորդ տառեր: Խոշոր կապոց:
- 7- Հակառակ՝ 420: Շաղկապ:
- 8- Ցուցական դերանուն: Տանիքի դուրս ցցուած եգերք: Արական անուն:
- 9- Բայց: Իրարայաջորդ տառեր:
- 10- Ամբողջական: Գրաբար՝ օր:
- 11- Գոյութիւն ունի: Շաղկապ:
- 12- Հայաստանի Ա. Հանրապետութեան նախարարներէն, որուն զլխաւորութեամբ Փետրուարեան ապստամբութեան օրերուն կազմուեցաւ «Հայրենիքի Փրկութեան Կոմիտէ»:

Ուղղահայեաց

- 1- Կասկածիլ:
- 2- Սարսափ: Կրկնուած բաղաձայններ: Սուրիոյ եւ Լիբանանի մէջէն անցնող գետ:
- 3- Ծառի տեսակ: Առագաստի սիւն:
- 4- Ձերբակալութիւն:
- 5- Խորհրդանշային պատկեր: Սիամանթոյի ծննդավայրը:
- 6- Գինիի բարեկամ: Հակառակ՝ գէշ:
- 7- Հակառակ՝ տառի մը անունը: Հակառակ՝ 7003: Ծնունդ տուող:
- 8- Ձուկի տեսակ: Տղամարդ:
- 9- Երկբարբառ: Վտիտ: Հակառակ՝ 6600:
- 10- Հակառակ՝ յոգնակերտ մասնիկ: Կրկնուած ձայնաւորներ: Հակառակ՝ առաջին կինը:
- 11- Ասացուածքը կ'ըսէ. «..... տակառին ձայնը բարձր կ'ելլէ»:
- 12- Հակառակ՝ ձայնանիշ: Սանդուղ:

ՍՈՒՏՈՒՆՈՒ (ՄՍ 332)

Տեղաւորէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

		9		5		3		4
		4						8
	6		2			5	9	
	1		6					3
			7		5			
	3			1	8		7	5
								4
	9			4	6	8		
4		7	1	9		6		

ՊԱՅՈՒՄԾ ԲԱՌ (ՄՊ 103)

Չապէլ Եսայեանի երկերը նշանակելով գտէ՛ք պահուած բառը: Պահուած բառը 12 տառերէ կը բաղկանայ եւ կը ներկայացնէ Եսայեանի գրական ստեղծագործութիւններէն մէկը, որուն մէջ կը ներկայացնէ կնոջ մը ապրումները:

ա	շ	ն	ո	բ	հ	ք	ո	վ	ա
հ	ն	ա	ս	բ	ա	հ	ի	ն	ք
հ	ա	ձ	յ	ս	վ	չ	է	ն	ս
ս	ո	ն	կ	լ	ի	է	բ	բ	ո
մ	պ	գ	ճ	ո	է	բ	է	բ	բ
ա	ժ	ա	ի	ա	ւ	ւ	է	ջ	է
բ	ա	կ	ս	ս	բ	թ	ս	բ	ա
դ	մ	մ	է	մ	ի	ն	է	ն	լ
ի	է	է	բ	դ	ա	ա	է	ա	ժ
կ	բ	ջ	ա	կ	ծ	ն	ը	բ	ն

«Սպասման Սրահին Մէջ», «Շնորհքով Մարդիկ», «Կեղծ Հանճարներ», «Անձկութեան Ժամեր», «Երբ Այլեւս ՉԵՆ Սիրեր», «Հոգիս Աքսորեալ»

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 332)

ՍՈՒՏՈՒՆՈՒ (ՄՍ 331)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	բ	հ	ա	ք	ա	ք	ա	ի	ս	գ	ի
2	ա	մ	բ	ա	բ	է	բ	ձ	թ	ա	ս
3	ն	ա	ք	ա	ն	ք	ա	ւ	ա		
4	ա	ն	ա	ն	ա	կ	ա	գ	ա	հ	
5	գ	ա	հ	ի	կ	ի	ա				
6	ն	կ	ն	ք	ա	կ	թ	ա	ն	կ	
7	դ	ա	ւ	ա	ն	ն	ք	է			
8	ն	ւ	ն	չ	ա	յ	ա	մ	բ		
9	ա	ա	ջ	ա	մ	բ					
10	ա	ա	ք	ա	ք	ա	ա				
11	ա	բ	տ	ա	ա	ո	ա	ք	ի	ն	ի
12	մ	ի	մ	ա	ք	տ	ա	ա	յ	լ	

4	3	6	1	2	7	8	5	9
1	9	7	8	6	5	4	3	2
8	2	5	9	3	4	6	7	1
2	4	1	5	9	6	3	8	7
3	5	8	4	7	2	9	1	6
6	7	9	3	8	1	5	2	4
5	6	4	7	1	8	2	9	3
7	8	3	2	4	9	1	6	5
9	1	2	6	5	3	7	4	8

ՊԱՅՈՒՄԾ ԲԱՌ (ՄՊ 102)

Պահուած բառը՝ «Դերասանուհին»


ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Տարօժ Տուրուբերան Հայրենակցական Միութեան Վարչութիւնը կը հրահրէ ձեզ մասնակից դառնալու միութեանս հին եւ նոր ննջեցեալներու հոգեհանգստեան պաշտօնին, որ տեղի պիտի ունենայ Կիրակի, 1 Մարտ 2020-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Սրբոց Քառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ, Սալիպէ-Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին «Նիկոլ Աղբալեան» սրահէն ներս:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հանգուցեալ
ԱՐՄԵՆՈՒՀԻ ՖԵՐՄԱՆԵԱՆ
(Ծնեալ՝ ԴԱԻԹԵԱՆ)



Հանգուցեալի մահուան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 1 Մարտ 2020-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Վիլլաներ - Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին Ազգ. Մշակութային Միութեան սրահէն ներս:

Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



ԽՈՅ

Տնտեսական ձեր պայմանները պիտի բարելավուին: Պիտի աշխատիք ծածկել ձեր ձախողութեան պատճառները: Համբերութեամբ վարուեցէք ձեր բոլոր խնդիրներուն հետ:



ՑՈՒԼ

Ձեր յարաբերական աշխատանքները յաջողութեամբ պիտի պսակուին: Ձեր երազները պիտի իրականանան վերջապէս: Ուրախ լուրեր պիտի ստանաք:



ԵՐԿՈՒՐԵԱԿ

Այս շրջանին գերզգայուն պիտի ըլլաք եւ պիտի չկարենաք քննադատութիւններ լսել: Վերապահ եղէք ձեր զգացումներուն հանդէպ:



ԽԵՅՁԵՏԻՆ

Ձեր փափաքները իրականացնելու համար պետք է յամառ ըլլաք ձեր աշխատանքին մէջ եւ զօրաւոր կամք ունենաք:



ԱՌԻԾ

Ձեր գործերը պիտի դանդաղին այս շրջանին եւ առաջուան արդիւնքը պիտի չտան: Ընտանեկան ջերմ գրոյցներ պիտի ունենաք եւ պիտի արտայայտէք ձեր զգացումները:



ԿՈՅՍ

Ձեզի տրուած բազմաթիւ առիթներուն մէջ պիտի կորսուիք եւ չկարենաք կողմնորոշուիլ: Տքնաջան աշխատանքով պիտի յաջողիք հասնիլ ձեր նպատակներուն:



ԿՇԻՈՔ

Մարդասիրական գործեր պիտի կատարէք եւ գոհունակութիւն պիտի զգաք: Հոգ տարէք ձեր առողջութեան եւ ժամանակ տրամադրեցէք ձեր ընտանիքի անդամներուն:



ԿԱՐԻՃ

Ակադեմական կարեւոր աշխատանք մը պիտի կատարէք, որուն համար մեծ գնահատական մը պիտի ստանաք:



ԱՂԵՂՆԱՌ

Ձեր բոլոր հարցերը ինքնաբերաբար պիտի լուծուին: Պիտի հանդիպիք այն անձին, որ պիտի յաջողի ձեր սրտին մէջ սիրոյ կայծ մը դնել:



ԱՅՏԵՂԶԻՐ

Վիճաբանութիւններէ հեռու մնացէք եւ արկածախնդրութեան մի՛ դիմէք, բախտէ գուրկ շրջան մըն է:



ՋՐՀՈՍ

Պիտի ստիպուիք ձեր զգացումներուն մէջ զուսպ ըլլալ ու չարտայայտուիլ: Դեմ յանդիման պիտի գտնուիք իրականութեան մը, որ ժամանակին փորձած են գաղտնի պահել ձեզմէ:



ՁՈՒԿ

Հարցադրումներ պիտի ունենաք ապագայ ձեր գործին առնչութեամբ: Ձեր ներկայութիւնը հաճելի է ձեր շրջապատին մէջ: Ուսման ասպարէզը շարունակելու նոր հետաքրքրութիւն մը պիտի ծնի ձեր մէջ:



ԲԱՐԵԿԵՆԴԱՆ Է

Հայկական տօներէն ամենէն ցնձալին Բարեկենդանն է: Անկա կը յաջորդէ Ս. Սարգիսի տօնին եւ կը տեւէ մինչեւ Մեծ պահքի նախօրեակը:

Բարեկենդանի սեղանը ընդհանրապէս առատ կ'ըլլար մտէլնով, յագեցած կերակրատեսակներով եւ խմիչքով: Այս իսկ պատճառով Բարեկենդանը երգերու մէջ կ'անուանէին նաեւ «փորեկենդան»:

Բարեկենդանի տօնի ամենախաղաղ ճաշատեսակներէն են փաթիլան (պանիրով կամ միսով տապկուած խմորեղէն), ամիճը (լեցուած հաւ կամ հնդկահաւ), բիւրիկը (տապկուած անուշեղէն), հալվան, փախլաւան, սըռնը (թանապուրի մէջ եփած խմորէ գնդիկներ), թանապուրի տեսակները, ձուածեղներ, սեմսեկը (միսով խմորեղէն), գաթաներու տեսակները, աղանձը, փոխինձը, ինչպէս նաեւ՝ կոլոլակները, խորովածներն ու խաշլաման:



Վարանդայի մէջ Մեծ պահքին նախորդող վերջին շաբթուան ընթացքին կերակրատեսակներու քանակը օրէ օր կ'աւելնար եւ Կիրակի օրը կը հասներ 12-ի: Հիմնական կերակրատեսակները խորովածներն էին՝ հաւով, գառնուկի եւ հորթի միսով:



Բարեկենդանին, ինչպէս մնացեալ տօներուն, կը պատրաստէին նաեւ հարիսա:

Կեսարիոյ մէջ Բարեկենդանի Կիրակին կը կոչուէր «Քեպապի Կիրակի»:

Վանի մէջ կանայք Ուրբաթ օրը մածուն կ'ուտէին, որ քիչ քանակով սնունդ ստանան ու նախապատրաստուին ճոխ սեղաններու:

Մարաշի մէջ Բարեկենդանի Երկուշաբթին կը կոչուէր Աղուհացի Երկուշաբթի կամ Հարթատօն: Այդ օրը կ'եփէին թթու ապուր, իսկ մնացած բոլոր օրերու գլխաւոր կերակրատեսակը քիւֆթէն էր:

Քաղցրեղէնի պարագային նախապատուութիւնը կը տրուէր մեղրով հալվային (հրուշակ), չամիչով գաթային:

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԵՐԳԵՐ

ԳԱՅԷ՛Ք, ՏԵՍԷ՛Ք Ժողովրդական երգ

Ձայնագր. Կոմիտաս Մշակում՝ Բ. Կարա Մուրզա

Գացէ՛ք, տեսէ՛ք, ո՞րն ա կերել գէժ,
Գացին տեսան գելն ա կերել գէժ,
Գելն գիծուն, Է՛ծն գտկուն, տիկ գար-ուն,
Հալալ է, Կրմօ, հալալ է, հալալ է, Ջամօ, հալալ է.
Ես ի՞նչ քեաֆուր դարու հասանք, հալալ է,
Ես ի՞նչ խտար Կրմօ ստացանք, հալալ է:
Դէ գնա՛, կի գամ, դէ գնա՛, կի գամ, շուտ կի գամ,
Կարմիր սուլեր հագնիմ, իգամ, շուտ կի գամ:

Գացէ՛ք, տեսէ՛ք, ո՞րն ա կերել զգել,
Գացին, տեսան արջն ա կերել զգել,
Արջն զգիլունք, գելն գիծուն, Է՛ծն գտկուն, տիկ գարեուն.
Հալալ է, Կրմօ, հալալ է, հալալ է, Ջամօ, հալալ է,
Ես ի՞նչ քեաֆուր դարու հասանք, հալալ է,
Ես ի՞նչ խտար Կրմօ ստացանք, հալալ է:
Նազ մի՛ աներ, նազ մի՛ աներ, նազ աղջիկ,
Մինթանովդ թոզ մի՛ աներ, ջան աղջիկ:

Նազ կու Էնեմ, կու, նազ կու Էնեմ, կու,
Նազ կու Էնեմ, նազ կու Էնեմ, նազ, տղայ,
Մինթանովս թոզ կու Էնեմ, ջան տղայ,
Խորոտիկ, խորոտիկ, խորոտիկ-մորոտիկ իմ եարնէ:



ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔԱՅԱՆԱՅԱԿԱՆ...

Սկիզբ՝ էջ 16

րու հոծ բազմություն: «Խորհուրդ Խորին» եւ «Յրաշափառ» շարականներու երգեցողութեամբ, հանդիսաւոր թափօրով մուտք գործեց Առաջնորդ Արքայական Յայրը: Սուրբ Պատարագի հոգեպարար երգեցողութիւնը կատարեց Ս. Աստուածածին եկեղեցւոյ Դպրաց Դասը, ղեկավարութեամբ դպրապետ տոքթ. Սարգիս Իսկէնեանի:

Արքայական Հոր «Չի Ողորմած եւ Մարդասեր ես» աղօթքի արտասանութեամբ եւ դպրաց դասի «Այսօր Աստուածութիւնն Չուարճանայ» շարականի երգեցողութեամբ ընծայեալ սարկաւազը ծնրադիր սուրբ խորան բարձրացաւ, խարտաւիլակին վկայութեամբ ձեռնադրիչ սրբազան հայրը իր օրհնութիւնները փոխանցելով քահանայութեան հրաւիրեց ընծայեալը՝ Հորը, Որդիին եւ Սուրբ Հոգիին անուսով: Ապա, «Աստուածային եւ Երկնաւոր Շնորհ»ի երեք անգամ երգեցողութեամբ ընծայեալը ժողովուրդին դառնալով ձեռքերը վեր բարձրացուցած հրաժարեցաւ աշխարհիկ կեանքէն ու սարկաւազութենէն եւ քահանայութեան կոչուեցաւ:

Այնուհետեւ, սրբազան հայրը իր աջը ղնելով նուիրեալին գլխուն՝ աղօթք արտասանեց, որմէ ետք սարկաւազական ուրարը պարանոցին վրայէն ձախէն աջ բերաւ իբրեւ նշան Քրիստոսի քաղցր լուծին: Հոգեթով աղօթքներու արտասանութեամբ ընծայեալը ստացաւ փիլոն, ապա սաղաւարտ, շուրջառ, բազպան, գօտի եւ քահանայական զգեստի միւս մասերը:

Այնուհետեւ խարտաւիլակ հայր սուրբը Մկրտարանէն հանդիսաւորապէս սուրբ Միւռնը բերաւ: Արքայական հայրը սրբալոյս Միւռնով օծեց ընծայեալին ճակատն ու երկու ձեռքերը, Յովսէփ սարկաւազը վերանուանելով Տէր Սուրբն Զահանայ:

Օծումէն ետք, սրբազան հայրը նորած քահանային յանձնեց Սուրբ Սկիզբ, անոր տալով պատարագելու իշխանութիւն, ապա արժանապատիւ քահանայ հայրը իր անդրաւիկ «խաղաղութիւն»ը բաշխեց հաւատացեալ ժողովուրդին:

Առաջնորդ Արքայական Յայրը խորհրդաւոր այս արարողութեան առիթով քարոզեց, բնաբան ունենալով առաքեալներու գործերուն 20-րդ գլխու 28-րդ համարը. «Հովուեցէ՛ք Տիրոջ եկեղեցին, որ ան իր արիւնով զնեց», որուն վրայ հիմնուելով ան մատնանշեց եկեղեցւոյ ծառայութեան նուիրուած հոգեւորականի առաքելութիւնն ու կոչումը:

Արքայական հայրը Նախ համապարփակ կերպով պարզաբանեց եկեղեցւոյ իմաստը, յայտնելով որ եկեղեցին միայն կառոյց չէ, դաւանանք չէ, հաւատամք չէ, այլ հաւատացեալներու այն ամբողջ բազմու-

թիւնն է, որ կու գայ համախմբուելու իր Արարիչին շուրջ: Աւելին՝ եկեղեցի կը նշանակէ ծառայութիւն: Քրիստոս որպէս եկեղեցւոյ հիմնադիրը, մեծագոյն օրինակը հանդիսացաւ ծառայութեան:

Մատնանշելով քահանայի յատկանիշները, սրբազան հայրը նշեց, որ քահանան եկեղեցւոյ տէրն ու պաշտպանն է, այն անձն է, որ ունի կայուն կեցուածք ու նկարագիր եւ մաքուր քրիստոնէական հաւատք: Քահանան այն անձն է, որ զգօս է, արթուն եւ վստահած իր հօտին, արեան գնով ծառայելու պատրաստ:

Արքայականը բնորոշեց, որ քահանան Աստուծոյ տնտեսն է, որ կը ծառայէ Աստուծոյ եւ ժողովուրդին: Այս բոլոր յատկանիշներուն բանալին սրբազան հայրը համարեց սէրը:

Առաջնորդ Արքայական Յայրը անհրաժեշտ նկատեց հոգեւորականի հետեւեալ յատկանիշները,-

Ա- Խոնարհութիւն. Նմանելով մեր Արարիչին եւ Փրկիչին, որ խոնարհութեան օրինակը հանդիսացաւ:

Բ- Հաւատարմութիւն. հաւատարիմ մնալու Սուրբ Հոգիին կողմէ իրեն տրուած կոչումին եւ հաւատարմօրէն գործադրելու իրեն վստահուած պարտականութիւնները:

Գ- Պաշտպանութիւն. հեռու մնալու կեղծ գաղափարներէ եւ պաշտպանելու մեր եկեղեցին ու հօտը անկոչ գայլերէն:

Դ- Հասունութիւն եւ գիտակցութիւն. հասունութեամբ եւ գիտակցութեամբ հովուելու հաւատացեալ հօտը:

Արքայական հայրը նորած քահանային մաղթեց, որ հաւատարմօրէն կատարելիքն շնորհած կոչումը, տէր կանգնելով մեր ազգային, եկեղեցական եւ մշակութային արժեքներուն:

Մատնանշելով նորած քահանային անուանումը ան ըսաւ. «Տէր Սուրբն քահանան մեզի կը յիշեցնէ Բերիոյ Հայոց Թեմի Նախկին առաջնորդներէն Գերշ. Տէր Սուրբն Արք. Գաթարոյեանը: Այս ձեռնադրութիւնը նշան մըն է, որ այս թեմը կը յարգէ եւ կը պատուէ իր խոնարհութիւնը, ի մասնաւորի Սուրբն սրբազանը, որուն օրով առաւել եւս ծաղկեցաւ ու պայծառացաւ Բերիոյ Հայոց Թեմը: Վստահ եմ որ սրբազան հօր անունը կրող արժանապատիւ քահանայ հայրը նոյն հաւատքով, նուիրուածութեամբ եւ բժախնորութեամբ պիտի շարունակէ ծառայել մեր ժողովուրդի գաւակներուն»:

Գերաշնորհ սրբազանը երախտագիտական զգացումներով ողջունեց սուրբական խորհրդարանին Հայոց Տեղասպանութիւնը ճանչնալու որոշումը: Աղօթելով առ Բարձրեալն Աստուած, որ պահէ ու պահպանէ Սուրբական Յայրենիքը, սուրբական բանակն ու անոր վստահաշուք Նախագահ տոքթ. Պաշար ալ Ասատը: Աղօթքը շարունակելով սրբազան հայրը, մաղթեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին առող-

ջութեամբ լեցուն բազմաշատ յաջողութեան օրեր՝ ի պանծացումն հայ եկեղեցւոյ եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:

Քարոզէն ետք, «Քրիստոս Ի Մէջ Մեր Յայտնեցաւ» շարականի երգեցողութեամբ եկեղեցական դասը քահանայ հօր օծուած ճակատէն ու ձեռքերէն օրհնութիւն ստացաւ:

Աւարտին, տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երջանկայիշատակ միաբաններու հոգիներուն համար:

Արարողութենէն ետք, հաւատացեալ ժողովուրդը աջահամբոյրով շնորհաւորեց արժանապատիւ Տէր Սուրբն Զահանան եւ ստացաւ անոր առաջին օրհնութիւնը:

Նորած քահանայ հայրը իր քառասօրեայ պահեցողութեան ու հոգեւոր պատրաստութեան ժամանակաշրջանը պիտի անցընէ Արքոյ Քառասկից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ...

Սկիզբ՝ էջ 1

Այս աշխատանքները արդիւնաւորուեցան 13 Փետրուար 2020-ին, երբ Սուրբիոյ խորհրդարանի հայազգի երեսփոխաններու եւ սուրբահայ մտաւորականներու ջանքերով, Սուրբիոյ խորհրդարանը, որ կը ներկայացնէ սուրբական ընկերութիւնը կազմող բոլոր բաղադրիչները, միաձայնութեամբ ճանչցաւ Հայոց Տեղասպանութիւնը եւ դատապարտեց գային, որպէս 20-րդ դարուն իրագործուած դաժան ոճրագործութիւն: Բանաձեւը կ'արտացոլացնէ Սուրբիոյ ժողովուրդին տարիներ առաջ ցուցաբերած մարդասիրական վստահ վերաբերմունքը՝ ցեղասպանութեան օրերուն Սուրբահայաստանած հայութեան նկատմամբ:

Խորհրդարանին կողմէ ընդունուած այս բանաձեւը կ'ողջունէ աշխարհի խորհրդարաններուն եւ մի-

ջազգային ընտանիքին որդերգելու նոյն կեցուածքը եւ դատապարտելու Թուրքիոյ կողմէ մարդկութեան դէմ գործուած այս ոճիրը: Դար մը առաջ գործուած ոճիր մը, որ կը շարունակուի գործադրուիլ այսօր Սուրբիոյ հողերուն վրայ, նոյն քաղաքականութեամբ, նոյն ոճով, նոյն ոտնձգութիւններով ու անօրէնութիւններով: Ի վերջոյ նոյն հեղինակն է, որ կը ստորագրէ երկու ոճրագործութիւններուն ներքեւ:

Սուրբահայութիւնը ինչպէս անցեալին, այսօր եւս կը յայտնէ իր ամբողջական զօրակցութիւնը Սուրբիոյ արդար պահանջներուն, անոր հողային ամբողջականութեան եւ այդ հողերուն վրայ իր գերիշխանութեան հաստատման: Մօտեցում մը, որ իր արտայայտութիւնը գտաւ Սուրբիոյ պատերազմի տարիներուն՝ սուրբական հայրենիքին նկատմամբ սուրբահայութեան դրսեւորած հայրենասիրական մօտեցումներով:

Արձանագրուած այս քայլը Հայ Դատի աշխատանքներուն շրջագիծէն ներս առնուած քայլ մըն է, որ պիտի շարունակուի մինչեւ հայ ժողովուրդի արդար իրաւունքներու հատուցում, մինչեւ գրաւուած հողերու ազատագրում եւ Ազատ, Անկախ ու Միացեալ հայրենիքի կերտում:

ՏԵԱՌՆԸ...

Սկիզբ՝ էջ 7

տարութիւնը վերջ գտաւ ներկաներուն կողմէ Հայաստանի Հանրապետութեան Օրինագի միասնական երգեցողութեամբ:

Տեառնը նախաձեռնեց Կաթողիկոսութեան համաձայն, հաւատացեալները իրենց նորածին երեխաները ընծայաբերեցին Սուրբ Խորանին, ստանալու աստուածային օրհնութիւնները: Անոնք Քրիստոսի լոյսը խորհրդանշող ճրագը իրենց տունը տանելով օրհնեցին նաեւ իրենց օձախները:

«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ
Խմբագիր՝ Զարմիկ Զիւլպեռեան-Պողիկեան
Սրբագրիչներ՝ Զեփիւռ Պապիկեան-Աւագեան
Յուշիկ Ղազարեան
Զեւաւորող՝ Յովսէփ Զալոյլեան
Գրաշար՝ Անի Թովմալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան
Կայքէջի պատասխանատու՝ Քրիստ Խրոյեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիւլպեռեան
Հաշուապահ՝ Սեւակ Կիւլվանեսեան
- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:



Ռաֆֆի Սիլահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

-Սուրիոյ ֆուտբոլի դաշնութիւնը եւ թունուսցի մարզիչ Նապիլ Մաալուլի բանակցութիւնները յաջողութեամբ աւարտեցան: Թունուսցի մասնագետը այս շաբթուան ընթացքին պիտի ժամանէ Դամասկոս, պաշտօնապէս ստանձնելու Սուրիոյ ֆուտբոլի ազգային հաւաքականի մարզիչի պաշտօնը: Մաալուլ թունիսեան ձայնասփիւռին հետ զրոյցի մը ընթացքին յայտնեց որ դաշնութեան հետ համաձայնած է պայմանագրի թուր յօդուածներուն շուրջ: Ան իր հետ պիտի ունենայ Նաեւ երկու թունուսցի օգնական: Աւելցնենք, որ Նապիլ Մաալուլ Նախապէս մարզած է Թունուսի հաւաքականը եւ անոր հետ 2018-ին մասնակցած է Ռուսիոյ մէջ տեղի ունեցած համաշխարհային խաղերուն:




- Սուրիոյ պասքեթի տղոց հաւաքականը, իրարայաջորդ ձախորդութիւններու պատճառով, դուրս մնաց Յորդանանի մէջ տեղի ունեցած Ապտալլա թագաւորին անունը կրող մրցաշարքէն: Սուրիոյ հաւաքականը չորս պարտութիւն կրելով կրցաւ յաղթել միայն Պահրէյնի կազմին:

ՀԱՅԿԱԿԱՆ

ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ՝ ԵՐՈՊԱՅԻ ՀՆԳԵԱԿԻ ԱՆՈՅԵԱՆ

Յունահռոմեական ոճի ըմբիշ Արթուր Ալեքսանեան, 5-րդ անգամ ըլլալով հռչակուեցաւ աշխարհի ախոյեան: Իտալիոյ մայրաքաղաք Ռոմի մէջ տեղի ունեցած Եւրոպայի ըմբշամարտի ախոյեանութեան, 97 քկ. ծանրութեան հայ մարզիկը եզրափակիչ մենամարտին պարտութեան մատնեց վրացի խաղացող Նիկոլոս Կախելաշվիլուն:



Արթուր Ալեքսանեան 7-1 արդիւնքով արձանագրեց ուժեղ յաղթանակ մը եւ Հայաստանին նուիրեց ոսկի մետալ մը եւս: Աւելցնենք, որ Արթուր Եւրոպայի ախոյեան դարձած էր 2012, 2013, 2014 եւ 2018 թուականներուն:

ԳԵՈՐԳ ՂԱՐԻՊԵԱՆ ԾՈՒՆԿԻ ԲԵՐԱՒ ԹՈՒՐՔԸ

Հայաստանի յունահռոմեական ոճի ըմբիշ, 60 քկ. ծանրութեան մրցումներուն խաղացող Գեորգ Ղարիպեան Իտալիոյ մէջ տեղի ունեցած մրցաշարքին նուաճեց ոսկի մետալ, պարտութեան մատնելով թուրք մրցակիցը՝ Զերիմ Քամալը: 26 տարեկան ըմբիշը առաջին անգամ իր մասնակցութիւնը կը բերէ Եւրոպայի երէցներու մրցաշարքին:



Մրցումին առաջին փուլը աւարտեցաւ ի նպաստ թուրքին, 1-0 արդիւնքով, սակայն երկրորդին՝ Գեորգ յաջողեցաւ ձեռք ձգել հինգ կէտ: Աւելցնենք, որ Ղարիպեան իր դէմ ծունկի եկած թուրքին առջեւ եռազոյն դրօշը բարձրացնելով տօնեց յաղթանակը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՄԱՆՉԵՍԹԸՐ ՍԻԹԻՆ ՊԱՏԺՈՒԵՑԱՒ

Անգլիական The Guardian օրաթերթը իր գլխաւոր լուրերուն մէջ անդրադարձաւ Անգլիոյ վերջին երկու տարիներու ախոյեան Մանչեսթըր Սիթիին, դիտել տալով, որ ան երկու ծանր պատիժ կրած է եւ յառաջիկայ երկու տարեշրջաններուն զրկուած է Եւրոպայի ախոյեանական մրցաշարքերուն մասնակցութենէն: Ըստ թերթին, Սիթի արդար խաղի կանոնները խախտելուն համար ենթարկուած է տոյն պատիժին: Անգլիական ակումբը 30 միլիոն եւրոյի արժողութեամբ տուգանք ալ պիտի վճարէ:



ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ...

Սկիզբ՝ էջ 16

առիթով, մաղթելով, որ Սուրիական Հայրենիքի ողջ տարածքը ազատագրուի ու Սուրիան վերագտնէ իր կենսունակութիւնը՝ թօթափելով պատերազմին հետքերը:

Հանրապետութեան մուֆթին շերմօրէն ընդունեց պատուիրակութիւնը, յայտնելով որ մեծապէս տպաւորուած է Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Առաջնորդարան մէկէ աւելի այցելութիւններուն հետքով:

Այնուհետեւ ան առանձնաբար անդրադարձաւ հայ ժողովուրդին աշխատասիրութեան, լուսարձակի տակ առնելով սուրիահայութեան հաւատարմութիւնն ու հայրենասիրութիւնը, ինչպէս նաեւ Սուրիոյ վերականգնումին սատարելու անոր պատրաստակամութիւնը: Շէյխ Ահմետ Պատրըտտիին Հասսուն իր ողջոյնի խօսքը ուղղեց Նորին Սրբութեան եւ շնորհակալութիւն յայտնեց Վեհափառ Հայրապետին իր բարեմաղթութիւններուն համար: Հանրապետութեան մուֆթին իր ամբողջական զօրակցութիւնը յայտնեց Սուրիոյ Հայ Համայնքին եւ Բերիոյ Հայոց Թեմին:

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ...

Սկիզբ՝ էջ 16

պարտման երախտարժան քայլին եւ Հայաստանի Հանրապետութեան, հայ ժողովուրդին ու սուրիահայութեան Սուրիոյ խորհրդարանին եւ երկրի վսեմաշուք Նախագահ Պաշարալ Ասատին ուղղած ողջոյնի խօսքերուն:

Կողմերը լուսարձակի տակ առին սուրիական բանակին յաղթանակները, յատկապէս Հալէպի ազատագրման ուրախալի իրադարձութիւնը, դիտել տալով, որ ազատագրուած Հալէպն ու անոր պայքարունակ ժողովուրդը աստիճանաբար պիտի վերագտնեն իրենց երբեմնի աշխոյժ կեանքը:

Չրուցակիցները վերյիշեցին տագնապի օրերուն պրն. Տիգրան Գեորգեանի Հալէպ գտնուիլը եւ պատերազմի տարիներուն ՀՀ Սուրիոյ Դեսպանութեան եւ Հիւպատոսութեան բաց պահուիլն ու շարունակուող գործունեութիւնը:

Անոնք կարեւոր համարեցին Հայաստանին, հայ ժողովուրդին ու սուրիահայ համայնքին մասնակցութիւնը Սուրիոյ վերականգնումի աշխատանքներուն:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Գանտիլեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանին, Ազգ. Վարչութեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղականութեան եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝



ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

ՄԱՆՈՒԿ ԳԱՆՏԻԼԵԱՆԻ

մահուան սուգին:

Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 1 Մարտ 2020-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ-Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցւոյ սրահէն ներս:

ԵՐԱՅԵՐԵՐԹ

24/2



6° 14°

ԵՐԵՎԱՆԻ

25/2



3° 13°

ՉՊՐԵՎԵՐԹ

26/2



4° 13°

ՀԻՆԿԵՐԹ

27/2



4° 14°

ՈՒՐԱՐԹ

28/2



4° 14°

ՇԱՐԱՐԹ

29/2



4° 14°

ԿԻՐԱԿԻ

1/3



3° 15°

ԲԵՐԻՈՅ ՆԱՅՈՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՅՅԵԼԵՅ ԿՐՕՆԱԿԱՆ ԿԱԼՈՒՄՇՆԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ՝ Ի ԴԱՄԱՍԿՈՍ

Չորեքշաբթի, 19 Փետրուար 2020-ի առաւօտուն, Բերիոյ Յայոց Թեմի Բարեչան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան, ազգային պատուիրակութեան ընկերակցութեամբ, այցելեց Սուրիոյ կրօնական կալուածներու նախարար Ապտուլ Սաթթար Սէյիտին, Դամասկոս:

Պատուիրակութեան մաս կը կազմէին Բերիոյ Յայոց Թեմի ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդը, Ազգային Վարչութեան ատենապետը, Սուրիոյ խորհրդարանի Երեսփոխան Ժիրայր Րէիսեան եւ Ազգային Կեդրոնական Վարչութեան ու թեմիս ազգային մարմիններու ներկայացուցիչներ:



Առաջնորդ Սրբազան Յայոց իր խօսքին մէջ նախ Մեծի Տանն Կիլիկիոյ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Յայրապետին ողջոյնները փոխանցեց նախարարին, ապա Բերիոյ Յայոց Թեմին Ազգային Իշխանութեան եւ Ժողովուրդին անունով շնորհաւորեց անոր եւ իր սրտի անհուն ուրախութիւնն ու խնդակցութիւնը յայտնեց Յալէպի ամբողջական ազատագրման առիթով, մաղթելով Սուրիոյ ամբողջական տարածքին շուտափոյթ ազատագրումը:

Նախարարը ուրախութեամբ ընդունեց պատուիրակութիւնը, յայտնելով, որ հայ ազգին հետ գործակցութիւնը միշտ ցանկալի է Սուրիոյ պետութեան համար: Ապա յայտնեց իր յարգանքը Նորին Սրբութեան, հայ ազգին եւ բարձրորէն գնահատեց սուրիահայ համայնքին պատուաբեր կեցուածքները պատերազմի ողջ տարիներուն:

Աւելի քան մէկ ժամ տեւող ջերմ հանդիպումին ընթացքին արծարծուեցան Բերիոյ Յայոց Թեմի շրջաններուն առնչուող այլազան նիւթեր: Նախարարը իր ամբողջական զօրակցութիւնը յայտնեց տարուող աշխատանքներուն, դիտել տալով որ Սուրիոյ եկեղեցիներուն եւ մզկիթներուն պահպանումն ու վերականգնումը նախարարութեան առաջնահերթութիւններուն մաս կը կազմեն:

ԲԵՐԻՈՅ ՆԱՅՈՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ՄԱՍԻՍ ՍՐԲ. ԵՊՍ. ԶՕՊՈՒԵԱՆ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԵՋ ԱՅՅԵԼԵՅ ՍՈՒՐԻՈՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՈՒՅԹԻ ՇԵՅՆ ԱՆՍԵՏ ՊԱՏՐԵՏԻՆ ՀԱՍՈՒՆԻՆ

Չորեքշաբթի, 19 Փետրուար 2020-ի միջօրէին, Բերիոյ Յայոց Թեմի Բարեչան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան թեմի ազգային պատուիրակութեան ընկերակցութեամբ այցելեց Սուրիոյ Յանրապետութեան Մուֆթի Շէյխ Ահմետ Պատրըտտին Յասունին, Դամասկոս:



Առաջնորդ Սրբազան Յայոց խօսք անելով նախ փոխանցեց Մեծի Տանն Կիլիկիոյ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Յայրապետին ողջոյնը եւ շնորհակալական խօսքը Սուրիոյ խորհրդարանին ու պետութեան՝ Յայոց Յեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման համար: Ապա սրբազան հայրը Բերիոյ Թեմի Ազգային Իշխանութեան եւ Ժողովուրդին անունով շնորհաւորեց մուֆթին եւ իր սրտի անհուն ուրախութիւնն ու խնդակցութիւնը յայտնեց Յալէպի վերջնական ազատագրման

Շար.՝ էջ 15 >

ԲԵՐԻՈՅ ՆԱՅՈՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. ՏԵՐ ՄԱՍԻՍ ՍՐԲ. ԵՊՍ. ԶՕՊՈՒԵԱՆԻ ԱՆՂՐԱՆԻԿ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԶՅ ՍՈՒՐԻՈՅ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Չորեքշաբթի, 19 Փետրուար 2020-ին, Բերիոյ Յայոց Թեմի Բարեչան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան, ազգային պատուիրակութեան ընկերակցութեամբ, իր անդրանիկ այցելութիւնը տուաւ Սուրիոյ մէջ ԶԿ ղեսպանատան (Դամասկոս) եւ հանդիպում ունեցաւ ԶԿ Սուրիոյ ղեսպան տիար Տիգրան Գեորգեանի հետ: ԶԿ ղեսպան Տիգրան Գեորգեան ջերմօրէն ողջունեց սրբազան հայրն ու անոր ընկերակցող պատուիրակութիւնը:



Բարի գալուստի խօսքերէն ետք, անդրադարձ կատարուեցաւ Սուրիոյ խորհրդարանին կողմէ Յայոց Յեղասպանութեան ճանաչման ու դատա-

Շար.՝ էջ 15 >

ՔԱՅԱՆԱՅԱԿԱՆ ԶԵՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ ԿԱՐԳՈՎ ԲԵՐԻՈՅ ՆԱՅՈՅ ԹԵՄԸ ՕԺՏՈՒԵՑԱՒ ՆՈՐ ՔԱՅԱՆԱՅՈՎ, ԲԱՐԵՇՆՈՐԶ ՅՈՎԱԵՓ ՍՐԿ. ԱՐՍԼԱՆԵԱՆԸ ՎԵՐԱԿՈՉՈՒԵՑԱՒ ՏԵՐ ՍՈՒՐԵՆ ՔԱՅԱՆԱՅ

Քահանայական ձեռնադրութիւնն ու օծումը հոգեկան գոհունակութեան եւ վերանորոգութեան առիթ մը եղաւ Բերիոյ Յայոց Թեմի

Քահանայական ձեռնադրութեան եւ օծման կարգին ներկայ էին քոյր համայնքներու առաջնորդներ եւ ներկայացուցիչներ, Բերիոյ Յայոց



հաւատացեալ ժողովուրդին համար: Սրբոց Ղեւոնդեանց Քահանայից տօնին առիթով, Շաբաթ օրուան քահանայական կոչման արարողութե-

Թեմի Երեսփոխանական Ժողովի, Ազգ. Վարչութեան եւ Կրօնական Ժողովի պատգամաւորներ, Պատկան Մարմինի ներկայացուցիչներ, ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդ Գերշ. Տ. Լեւոն Վրդ. Եղիայեան, Գերշ. Տ. Մանուկ Աբղ. Պարիխանեան, Թեմի



նէն ետք, Կիրակի, 16 Փետրուար 2020-ին, առաւօտեան ժամը 9:30-ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ յընթացս Սուրբ եւ Ամմահ Պատարագին, Բերիոյ Յայոց Թեմի Բարեչան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ.



եկեղեցիներու թաղական խորհուրդները, ազգային-եկեղեցական մարմիններու եւ հալէպահայ հաս-



տատութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ ընծայեալ քահանայի ընտանիքը եւ հաւատացեալներ:

Շար.՝ էջ 14 >